

Խմբագրական

ՏԱՐԵՎԵՐՋԻ ԱՆՍԵԹԵԻԵԹ ԽՕՍՔԵՐ



Շուտով 2017 թուականը կ'անցնի պատմութեան: Տարի մը՝ լի իղծերով ու տազնապներով, երազներով ու հիասթափութիւններով, մակընթացութիւններով ու տեղատուութիւններով, մաքառումներով ու նահանջներով... ինչպէս է մարդկային կեանքն առհասարակ: Տարեվերջի այս օրերուն, իմաստալից աւանդոյթ է՝ սթափ հայեացքով եւ ինքնամփոփ խոկումով, կատարել վերազնահատումը անցնող տարուան, մասնաւորապէս ազգային-հաւաքական կեանքի ծիրէն ներս:

Ո՞ր կը գտնուինք այսօր որպէս համայնք եւ հաւաքականութիւն, որպէս սփիւռք կամ սփիւռքներ, որպէս ազգ ու հայրենիք, եւ ո՞ր կ'երթանք: Հարցումներ՝ ասոնք, որոնք թերեւս ւաւելի կարեւոր են, քան անոնց տրուած պատասխանները, քանզի անոնք տեսակ մը հրաւեր են ազգային զգօնութեան, սթափ հայեացքի ու արթնացման՝ անտարբերութեան, ինքնագոհութեան եւ ինքնախաբէութեան թմբիրէն ձերբազատ...

Համայնքային կեանքէն ներս, գրական-գեղարուեստական հազուագիւտ փայլատակումները վստահաբար ոգեշնչեցին մեզ, սակայն չկրցան անոնք լեցնել ազգային հոգեմտաւոր ու կրթամշակութային այն վիթխարի բացը որ գոյացաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան լուսոյ տաճարի փակումով, ասկէ արդէն ւաւելի քան տասը տարիներ առաջ: Անկէ անկախաբար այ, տակաւ կ'ահագնանայ նիւթապաշտ եւ օգտապաշտ, հոգեզուրկ եւ պիզնեսային աշխարհի մը համահարթեցնող, ամենակուլ յորձանքը, ուր անչափ կը նուազին տեղն ու դերը՝ ազգին ու անոր ինքնութեան, ինքնուրոյն լեզուին, մշակոյթին ու պատմութեան... Այս հոսանքին անձնատուր, տխուր է նկատել որ այսօր որքան աղճատուած ու խեղճացած է մեր բերնին մէջ մեր մայրենի լեզուն, որքան աղաւաղուած է ան օտար բառերու ներխուժումովը մայրենիէն ներս: Ներկայիս, մեր համայնքէն ներս, քանի՞ հոգի կը հաշուեն անոնք, որ հայ թերթ ու հայ գիրք կը կարդան, հայերէն կը գրեն թելուզ դիմատետրի էջերուն մէջ...եւ դեռ կը նահանջենք երգ ու պարով, երգ ու նուագով, երբ հայկական խրախճանքներուն կը զլանանք հայերէն բառ մ'իսկ արտասանել, նախընտրելով տեղական կամ օտար լեզուն...:

Ի գուր չէ որ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը, Արամ Ա. ցաւով պիտի արձանագրէր թէ «Սփիւռքը կը մաշի», Հայաստան-Սփիւռք 6-րդ Համաժողովին:



Այո՛, սփիւռքը՝ արեւմտահայութեան տարագիր ժառանգորդներու յաջորդական սերունդը, սերունդները կը մաշին տակաւ, հեռանալով իրենց ազգային արմատներէն, արեւմտահայերէնէն, իրենց բնիկ մշակոյթէն, իրենց պատմութենէն... Պիտի վերածուի՞ն անոնք արդեօք անդիմագիծ, ուղեկորոյս եւ ապաքաղաքականացած փերեզակներու ամբոխի, ինչպէս կը նախատեսէր Վազգէն Շուշանեան, շուրջ դար մը առաջ: Ա՛լ ժամանակը չէ՛ որ աւանդական սփիւռքը քաղաքականապէս վերակազմակերպուի, խտանալով եւ համախմբուելով մէկ, լիազօր, ներկայացուցչական Կառոյցի մը ներքոյ, կամ ինչպէս իրաւաբան ու քաղաքագետ Մեթր Գասպար Տերտերեան կ'առաջադրէ տարիներէ ի վեր՝ Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Զոնկրեսի մը ներքոյ, ինչ որ նոր իմաստ պիտի տար հայապահպանման եւ հայակերտումի մեր ճիգերուն: Մօտաւորապէս, նոյն գաղափարը կը յայտնէր ներհուն մտաւորական Վահէ Օշական՝ 1994-ին կայացած իր մէկ հարցազրոյցին ընթացքին, նշելով անհրաժեշտութիւնը կազմաւորելու Սփիւռքահայ Ժողովրդավար Հանրապետութիւն... միաւորելու բազմամշակոյթ, բազմալեզու, բազմահպատակ սփիւռքի բեկորները քաղաքականապէս, հաւատալով որ Սփիւռքը կրողն է արեւմտահայ մշակոյթին, ազգային ուրոյն Էութեան...: Պիտի աւելցնէի՝ տերն է բռնախլուած Արեւմտահայաստանի իրաւապահանջութեան:

Դժբախտաբար, այս գաղափարները ցարդ կը մնան ձայն բարբառոյ յանապատի: Ո՞վ պիտի նախաձեռնէ նման դժուարին, բարդ ու հետեւողական աշխատանքի մը: Աւանդական քարացած կառոյցներու պատասխանատունե՞րը, թէ՛ իշխանատենչ ու աթոռամոլ ղեկավարները... որոնք կը գոհանան, մեծաւ մասամբ, ցուցադրական եւ ցուցափեղկային արարքներով ու գործունեութեամբ, յագուրդ տալու համար՝ մակերեսային արժէքներով սնանող բազմութեան մը տենչանքներուն...: Ո՞ր է այն ճշմարիտ, առաքելատիպ, մտաւորական ղեկավարը, ազգային ոգի ու տեսլական ներշնչող առաջնորդը, առաջնորդները, որոնք կարենան իրենց ետեւէն տանիլ մոլորուած զանգուածը մեր ժողովուրդին, ուղեցոյց դառնալ անոր՝ ներկայ ապագայնացնող եւ ապաքաղաքականացնող ժամանակներու թոհուբոհին մէջ:

Ղեկավարութեան այս տագնապը կ'ապրին Սփիւռքն ու Հայրենիքը հաւասարապէս: Ամենուր իշխողն ու տիրականը կը թուին ըլլալ եսակեդրոն, խմբակային կամ նեղ կուսակցական ու հատուածական շահն ու փառքը, դիրքն ու պաշտօնը, երեւելիութեան մարմաջը, ոյժի ցուցադրութիւնը...: Մինչդէռ, օդի, ջուրի, հացի նման, պահանջուածը՝ համահայկական շահի գիտակցութիւնն է, զայն հետապնդելու ամբողջանուէր յանձնառութիւնը, վերանձնական, վերիմբակային, վերհատուածական մտածելակերպն ու գործելակերպը: Մէկ խօսքով՝ ճշմարիտ ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը:

Ղեկավարութեան այս տագնապով կը բացատրուին գերազանցօրէն՝ Սփիւռքի կամ սփիւռքներու անտեր, անտիրական, կեդրոնախոյս իրավիճակը, համահայկական մտածողութեան պակասը, հեռանկարային մտածելակերպի եւ գործելակերպի բացակայութիւնը, ազգային-կրթական-մշակութային նահանջը..., տարագիր սփիւռքի սփիւռքակեդրոն, ներկայացուցչական լիիրաւ մարմին մը կեանքի կոչելու քաղաքական կամքի չգոյութիւնը: Ի դէպ, նշելու ենք այստեղ որ առանց նման մարմնի մը գոյութեան, չի



կրնար նաեւ կեանքի կոչուիլ Համազգային Խորհուրդը, կամ եթէ գոյառուի, չըլլար ան ներկայացուցչական, ընտրովի կայացած:

Հայաստանի Հանրապետութենէն ներս ալ, հմուտ, իմաստուն, արդարամիտ ղեկավարութեան տաղնապն է գլխաւոր պատճառներէն մէկը՝ մեր երկիրը հայաթափող, սպիտակ Եղեռնի թափ ու տարողութիւն ունեցող արտագաղթին, «կոռուպցիայի» առկայութեան գրեթէ բոլոր ոլորտներէն ներս ալ, ընկերային-տնտեսական սուր բեւեռացումին, համազգային շահերու վրայ հիմնուած ներքին թէ արտաքին քաղաքականութեան ու ռազմավարութեան պակասին, Հայաստան-Սփիւռք իրաւ համախոհութեամբ մշակուած համազգային Ծրագիր մը չորդեգրելու փաստին...

Կայ, կ'ապրի ու կը գործէ, սակայն, առողջ զանգուածը մեր ժողովուրդին ի Հայաստան եւ ի Սփիւռս...ան՝ որ հանապազօրեայ տքնութեամբ ու նուիրումով բեկոր մը լոյս ու բարիք կ'արարէ ի բարօրութիւն մեր ժողովուրդին: Ճշմարիտ հայրենասիրութեամբ ապրող այս զանգուածին մաս կը կազմեն՝ սահմանապահ զինուորէն ու հողագործէն մինչեւ հայ գիրի ու դպրութեան, հայ բառ ու բանի, գիտութեան, կրթութեան ու մշակոյթի նուիրեալը, շինականէն ու բանուորէն մինչեւ մտաւորականն ու շարքային քաղաքացին ու հայ մարդը...: Ան՝ որ կ'ապրի ու կը գործէ ազգային գիտակցութեամբ ու յանձնառութեամբ, ան՝ որ կրողն ու փոխանցողն է արեւմտահայ թէ արեւելահայ մշակոյթի, ազգային ոգիի ջահը վառ պահողը...

Հայ ազգը միշտ ալ քաղաքակրթական, մշակութային ազդակ եղած է ի հնուց անտի: Իսկ նմաններն են որ կրնան ըլլալ, եթէ վերակազմակերպուին ու միաւորեն իրենց ճիգերն ու կարելիութիւնները համահայկական ոգիով ու տեսլականով, հայկական գալիք վերածնութեան մը սերմնացանները...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

Կիպրոսի նախագահ Տիար Նիկոս Անաստասիատիսի ընդունելութիւնը ի պատիւ կիպրահայութեան



Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Նորին Վստմութիւն Տիար Նիկոս Անաստասիատիս գեղեցիկ գաղափարը ունեցեր էր պատուելու կիպրահայ համայնքը, կազմակերպելով գեղարուեստական երեկոյ մը, որ տեղի ունեցաւ նախագահական պալատին մէջ՝ Երկուշաբթի 11 Դեկտեմբեր 2017-ին, կ. ե. ժամը 6:30-ին, բարձր ներկայութեամբը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ի, որ յատկապէս ժամանեց Կիպրոս այս ձեռնարկին համար: Ներկայ էին

կիպրահայ համայնքի Պետ. Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեան, Կաթ. Փոխ. Տեր Խորէն Արք. Տողրամճեան, քահանայ Հայրերը, Կիպրոսի յոյն Ուղղափառ եկեղեցւոյ գլխաւոր արքեպիսկոպոսը, նախարարներ, խորհրդարանականներ, կուսակցապետեր, դեսպաններ եւ՝ Լառնազայէն, Լիմասոլէն ու Նիկոսիայէն բազմահարիւր հայեր:

Բարեգալուստի ջերմ խօսքով հանդէս եկաւ նախագահական Յանձնակատար Տիար Ֆոտիս Ֆոտիու, բարձր գնահատելով կիպրահայութեան ներդրումը Կիպրոսի կեանքին եւ կարեւորեց հայ, կիպրացի եւ յոյն ժողովուրդներու միջեւ պատմական յարաբերութիւններու ամրապնդումը եւ, միացեալ ծրագիրներով ու համաձայնագրերով, միջկառավարական երկխօսութեան զուգահեռ, անոնց սփիւռքեան համայնքներուն միջեւ մշակութային, կրօնական եւ տնտեսական ամուր կապերուն եւ համագործակցութեան սատարելու պատրաստակամութիւնը:

Տիար Վարդգէս Մահտեսեան շնորհակալութեան ջերմ խօսք ուղղեց երկրի նախագահին՝ իր եւ իր կառավարութեան անվերապահ զօրավիգին համար հայութեան եւ Հայաստանին, ինչ որ վառ արտայայտութիւն գտաւ մասնաւորաբար նախագահին պաշտօնական այցովը Երեւան՝ Եղեռնի 100-րդ տարելիցին, ինչպէս նաեւ սոյն գեղարուեստական-մշակութային երեկոյի կազմակերպութեամբ եւ այլ բազում նախաձեռնութիւններով, նշեց ան: Ան անդրադարձաւ հայերու ներկայութեան եւ անոնց Կիպրոսի կեանքէն ներս բերած գործօն մասնակցութեան, սկսեալ 6-րդ դարէն մինչեւ այսօր: Այդ դարաւոր ներկայութեան վկայութիւնն են Արմենոխորի եւ այլ գիւղեր, Մակարավանքը, Կանչուր եկեղեցին, Ս. Աստուածածին եկեղեցին եւ այլ պերճախօս վկայութիւններ, շարունակեց ան: Ան վստահութիւն յայտնեց որ նախագահին, կառավարութեան եւ ժողովուրդին ջերմ վերաբերմունքը եւ զօրավիգը կիպրահայութեան եւ Հայաստանին պիտի շարունակուին հետագային եւս եւ մաղթեց բարի, խաղաղ եւ բարգաւաճ նոր տարի:

Արամ Ա.՝ դրուատանքի իր նշանակալից խօսքին մէջ, նշեց յատկապէս որ անգամ մը եւս առիթ կը ներկայանար իրեն այցելելու այս օրհնեալ կղզին, արձանագրելով. «Այս կղզին օրհնուած է, քանզի Յիսուսի առաքեալներէն Ս. Պարնապասն էր որ եկաւ Կիպրոս եւ քրիստոնէութեան սերմերը տարածեց կղզին մէջ», ապա՝ անդրադարձաւ մասնաւորապէս



այն փաստին, որ կիպրահայերը ոչ միայն քաղաքացիներն են այս երկրին, այլ պահելով հանդերձ իրենց ինքնուրուիկն ու մշակոյթը, ընդունուած են կղզիին ընկերային, մշակութային, քաղաքական կեանքին, անոր ասանդութիւններուն եւ քրիստոնէական արժէքներուն, անոր յանուն արդարութեան մղած պայքարին հետ...Մեր երկու եկեղեցիներն ու ազգերը, ընդձեռն ան, սերտօրէն գործակից եւ զօրակից են իրարու, շէշտելով որ անոնք միասնաբար կը հաւատան արդարութեան որ յաճախ ոտնակոխ կ'ըլլայ մարդոց կողմէ, սակայն արդարութիւնը երկնատուր է, ըսաւ ան...Արդարութիւն՝ որ չի կրնար երբեք օրինականացնել բռնագրաւուած հողատարածք մը, ըլլայ անիկա Կիպրոսի մէջ, Երուսաղէմի մէջ, թէ այլուր: Արամ Ա. յատուկ շնորհակալութիւն յայտնեց Նախագահին, իր եւ Կիպրոսի յոյն ժողովուրդին ցուցաբերած եղբայրական ջերմ վերաբերմունքին համար, որուն շնորհիւ կիպրահայ համայնքը վառ կը պահէ իր ինքնութիւնը եւ կ'ապրի արժանաւայել կեանք մը, խարսխուած մարդկային իրաւունքներու բարձր սկզբունքներուն վրայ: «Մենք ձեզ կը սիրենք ոչ միայն որպէս Նախագահը Կիպրոսի, այլ նաեւ որպէս մարդ», ըսաւ Վեհափառ Հայրապետը եւ առ ի գնահատանք անոր ցուցաբերած հայամետ ու հայասեր վերաբերմունքին եւ զօրավիգին, Նախագահին նուիրեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բարձրագոյն պարգէնն ու շքանշանը՝ «Կիլիկիոյ Իշխան»ի բարձր տիտղոսը, ինչ որ ողջունուեցաւ ներկաներուն կողմէ երկարատեւ ծափահարութեամբ:

Հունկ, Նախագահ Նիկոս Անաստասիատիս իր ջերմ շնորհակալութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին իրեն պարգեւուած նման բարձր տիտղոսին համար, անդրադարձաւ կիպրահայութեան Կիպրոսի կեանքին բերած ներդրումին՝ կեանքի բոլոր ոլորտներէն ներս, սկսեալ 6-րդ դարէն մինչեւ հիմա, որուն համար ան նշեց որ ինք հպարտ կը զգայ հայութեամբ: Նախագահը արձանագրեց որ Կիպրոսի մէջ՝ համահաւասար իրաւունքներով կ'ապրին յոյն, թուրք, հայ, մարոնիթ եւ լատին ժողովուրդները, հանդուրժողութեան եւ փոխադարձ յարգանքի հիման վրայ: Ան ակնարկեց որ ցարդ կարելի չէր եղած համաձայնութեան եզր մը գտնել բռնագրաւեալ Կիպրոսի վերամիաւորման ուղղութեամբ տարուած բանակցութիւններուն, Թուրքիոյ կարծի կեցուածքին պատճառաւ եւ յոյս յայտնեց որ բաց երկխօսութեամբ պիտի շարունակուին կառավարութեան ճիգերը այսուհետեւ եւս, որպէսզի կարելի ըլլայ ի վերջոյ ունենալ ազատ Կիպրոս մը, համակեցութեան համերաշխ դրուածքով: Իր խօսքի ավարտին, ան բարի, խաղաղ եւ բարգաւաճ նոր տարի մաղթեց բոլորին:

Այնուհետեւ ծայր առաւ գեղարուեստական ճոխ յայտագիրը, մասնակցութեամբը՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ զոյգ երգչախումբերու (Խմբավար՝ Նառա Սարդարեան եւ Վիքի Գույումճեան, դաշնակի ընկերակցութիւն՝ Երեցկին Թամար Հապէշեան), որոնք ներկայացուցին գեղեցիկ փունջ մը հայկական եւ յունական երգերու, ինչպէս նաեւ՝ Համագային Օշական մասնաճիւղի «Սիփան» եւ «Նանոր» պարախումբերու (Պարուսոյց՝ Գրիգոր Զէլէշեան), որոնք մերթ թնդացուցին մթնոլորտը հայկական պարերու զուարթ ու կայտառ դոփիւնով, մերթ ալ հիացուցին ներկաները հեզաճկուն պարերու նազանքով եւ քնքշութեամբ: Գեղարուեստական յայտագիրը՝ իր ամբողջական պատկերով, գեղեցիկ ճաշակ մը փոխանցեց ներկայ օտար հանրութեան մասնաւորապէս՝ հայ երգ ու պարի շունչին ու ոգիին, խորհուրդին եւ գեղեցկութեան...

Երեկոյի ավարտին, հիւրասիրութեան սեղաններուն շուրջ, ներկաները դեռ երկար յամեցան, վայելելու տօնական օրերու զուարթ մթնոլորտը եւ երեկոյին առթած վառ տպաւորութիւնները:



ԱՉԱՏ ԽՕՍՔ

Յօդուածներ

ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

«Ներսը» մեր Հալէպն էր ...



Արեւոտ, աստղածորան, հազարագոյն, երազային Հալէպը:

«Դուրսը» աշխարհատարած Սփիւռքն էր ... սփիւռքներ, որոնք յեղակարծօրէն, ճակատագրին քմայքով, հերթականօրէն պիտի համայրուէին, այս անգամ Նաե՛լ հալէպահայերու պոչ բռնած երամներով:

Եւ ցաւոտ ու արիւնաքամ հարցումը հերթական:

Ո՛ր բերին ... ո՛ր կը տանին մեզ բազմամիլոյր ճամբաները աշխարհի:

Ինչո՞ւ այս տեղահանութիւնը դժխեմ:

Ինչո՞ւ այս տազնապը օրհասական:

Իրօք, կեանքի մեծագոյն տազնապը տեսիլքին քայքայման տազնապն է:

Այն տեսիլքին, որ հարիւր տարի առաջ, հազարամեակներու պատմութիւն ունեցող արեւելեան քաղաքի մը Նեղիկ, բայց արեւոտ փողոցներուն մէջ պիտի արարեր տարագիր հայուն «Երազային Հալէպը» :

Եւ այսօր, Սուրիոյ պատերազմէն եօթ տարի ետք, այդ լուսաւոր տեսիլքի քայքայումին հետեւանքով յայտնուած տազնապը, ցարդ, անցողիկ կամ գնայուն ըլլալու ո՛չ մէկ ցուցանիշ կը պարզէ:

Աւելի քան հարիւր տարի առաջ տեղի ունեցած «Հայրենահանում»ի անհակակշռելի աղէտէն ետք, այսօր ավելի քան երբեք անկասելի ընթացքի մէջ է «Հալէպահանում»ի կործանարար արտահոսքը, որ իւրաքանչիւր անվերադարձ հեռացողի հետ, քիչ մը ավելի կը սարսէ մեր «փոքր ածու»ին հիմքն ու խարիսխները... քիչ մը ավելի կը խորացնէ ու կ'ընդլայնէ «Ներսիներուն» եւ «դուրսիներուն» միջեւ գոյացած ճակատագրական անջրպետը:

Հետեւաբար քիչ մը ավելի կը բարդանայ ու կը հանգուցուի բազմագոյն, բազմաշերտ ու բազմակենցաղ սփիւռքներու ազգային ինքնութեան պահպանման հարցը:

Եւ ահա՛ ինքզինք պարտադրող հարցում-տազնապը՝

Մայր գաղութ Հալէպի մէջ, յետ եղեռնի արեւմտահայ ինքնութեան գաղափարափօսական արժէքները ամրագրած կարգափօսները, յետ այսու որքա՞ն համոզուածութեամբ պիտի շարունակեն իրենց շուրջ համախմբել արեւմուտքի խճճուած բաւիղներուն մէջ յայտնուած, տարրօրէն կեդրոնախոյս անհատ կամ հաւաքականութիւն... որքանո՞վ մեզի պիտի կամրջեն ովկիանոսներէն անդին, ազգային տակաւ խամրող ու գորշացող հորիզոններու



Ետին, «կտոր մը կապոյտ երկինք» փնտռտող հալեպահայ նորագիր աշխարհաքաղաքացիները:

Միւս կողմէն, Միջին Արեւելքի տարածքին, մանաւանդ Լիբանանի եւ Սուրիոյ մէջ տեղի ունեցած եւ դեռ շարունակուող պատերազմներու հետեւանքով անվերադարձ գաղթողներու արտահոսքը, քանակի եւ որակի մեծ բաց մը գոյացնելով, գէթ մօտիկ ապագայի մը մէջ, շատ մեծ յոյսեր չի ներշնչեր առկայ ժողովրդագրական աղէտին տագնապը գնայուն եւ անցողիկ համարելու իմաստով:

Յետեւաբար, վերականգնումի գործնականացումը կ'ենթադրէ համագաղութային համակարգուած գորաշարժի մը մեկնարկով, նախ կայացնել եւ կայունացնել «ներսիններուն» կամիջումի լիարժէք համակարգը: Մեկնելով իրապաշտութեան եւ իրատեսութեան լուրջ պահանջներէ, առկայ միջոցներով եւ կարելիութիւններով նախ կարգի բերենք մեր աներուած օճախը, միաժամանակ գէթ կենցաղային ու տնտեսական որոշ ապահովութիւն ներշնչենք նոր հոգեխոցներով տառապող «ներսիններուն» եւ զանոնք համախմբելով համագաղութային յայտարարներու շուրջ, տակաւ շրջանցենք մեր կրած բոլոր տեսակի վնասներուն պատճառած հոգեբանական սուր, այլեւ ջլատիչ տագնապը:

Պահը ծայրայեղ լրջութիւն կը թելադրէ:

Յարդի բոցով չենք կրնար ջերմացնել մեր հոգիի ու ոգիի օճախները...

Ծակ պտուկներու մէջ չենք կրնար վերականգնումի համագաղութային ծրագիրներ մշակել:

Ցուցափեղկային, ցուցադրական ցանկատեսութեամբ չենք կրնար «ներսիններուն» եւ «դուրսիններուն» միջեւ կամուրջներ կառուցել:

Ծակ թմբուկներէ հնչող հաճոյախօսութիւններով չենք կրնար երեւակայական հեռանկարներ փայփայել:

Յետեւաբար, չենք կրնար ջայլամի քաղաքականութեան նմանակով մեր մես-մերկ տխուր իրապատկերը չտեսնել:

Իւրաքանչիւրս ե՛լ «ներսիններ», ե՛լ «դուրսիններ», տեղայնական պայմաններուն չափանիշներով, ունինք մեր ինքնութեան կռուաններուն սպառնացող լուրջ խնդիրներ, ունինք տագնապ, ունինք մարտահրաւերներ , ընդ որուն, երկուստեք պարտինք կրել մեր միջավայրերու պայմաններով հայ կեանք ստեղծելու կամ վերստեղծելու անշրջանցելի, անյետաձգելի եւ պարտաւորեցնող պատասխանատուութիւնը: Այստեղ եւս, հեռու զգացական զեղումներէ, պէտք է ընդունիլ, որ այնքան ալ հեշտ ու մատչելի չէ աշխարհատարած սփիւռքներու կենցաղային ու մշակութային նոր ըմբռնումներու յորձանուտին մէջ ներքաշուած հալեպահայը առարկայական յայտարարներով կամիջել մեր տատանող խարիսխներուն... դեռ չենք խօսիր գէթ տասնամեակ մը ետք արտագաղթողներուն պարզելիք պատկերին մասին, երբ խառնածիւններու նոր բանակ մը բաւարար պիտի ըլլայ ընդգծելու անջրպետը «ներսիններուն» եւ «դուրսիններուն» միջեւ, երբ մեր լեզուն, որ բնական հաղորդակցութեան միջոց ըլլալէ առաջ եւ վերջ մտածողութիւն է, իմա՝ լեզուամտածողութիւն, կամայ թէ ակամայ տեղի տալով օտարութեան անզիջող պահանջներուն, դատարկուի գէթ արեւմտահայութեան համար ազգային ռազմավարութեան գաղափարախօսական հիմք ու մեկնակետ ըլլալէ:



Այս տխուր եզրակացութեան վաւերականութիւնը հաստատած եմ, տասնեօթը անընդմեջ տարիներ Վենետիկի Պետ. Համալսարանի Հայագիտութեան Ամպիոնի ամառնային խտացեալ դասընթացքներուն իբրեւ դասախօս մասնակցութիւնս բերած շրջանին, ուր մինչ օտարազգի ընթացորդներ կ'արձանագրէին մասնագիտական ակնառու նուաճումներ, աշխարհատարած սփիւռքներ ներկայացնող բազմաթիւ հայ ընթացորդներ, հակառակ մեր լեզուին ու մշակոյթին հանդէպ իրենց ցուցաբերած պարագայական եւ պահու թելադրանքով աճած խանդավառութեան, կարճ ժամանակ ետք կը վերսկսէին քալել «Նահանջը առանց երգի»-ին ուղիով, ուր բամբակէ դանակով կը մորթոտուին մեր ազգային ու մշակութային հիմնարար արժէքները բոլոր:

Ալ պէտք է ընդունիլ եւ թիրատեսութիւն կամ յոռետեսութիւն չհամարել, որ աշխարհացրիւ հայը, իր ի բնէ կեդրոնախոյս դրուածքով եւ կրած համապատասխան խայտաբղետ ազդեցութիւններով, ուշ թէ կանուխ դատապարտուած է մեր պատմութեան հունէն դուրս գալու, մինչ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ հակառակ պատերազմներու արդիւնքով ի յայտ եկող բազմապիսի դժուարութիւններուն, մանաւանդ հակառակ այդ պատճառով տեղի ունեցող զանգուածային արտագաղթերուն, համայնքային կեանքի վերականգնումը կը դառնայ ազգային յանձնառութեան առաջնագոյն օրակարգ, այս առումով իսկ, այսօր հալէպաբնակ հայը, ո'չ միամիտ լաւատեսութեամբ, այլ լուրջ վճռականութեամբ իր կորուստներուն եւ վնասներուն հաշուեկշիռը ընելով, իր առկայ նոր քանակի, նոր որակի ու նոր ներուժի տուեալներով կը ջանայ վերականգնել իր փլիլած երազը, բայց ո'չ միայն փրկելու ներկան, այլ ստեղծելու իր ապագայ տեսիլքը հիմնաւորող հերթափոխի խարիսխը:

Այո՛, պատերազմները թէեւ ակերիչ ու կործանարար հետեւանքներ կ'ունենան, սակայն կրնան դառնալ նաե՛ւ կացութիւններու քննութեան, փոփոխութեան եւ յառաջդիմութեան ազդակ՝

- * Եթէ դադրինք մեր հաւաքական ինքնասիրութիւնը շոյող խօսքերը իբր նեցուկ ընդունելէ
- * Եթէ դադրինք անցելապաշտութեան գերիները դառնալէ
- * Եթէ դադրինք մեր մանր-մուկ տարակարծութիւնները որոճալէ
- * Եթէ դադրինք լոկ դասական գոհի հոգեբանական բարդոյթը կրելէ

Եւ վերջապէս՝

«Ներսիները» եւ «դուրսիները» այսօր եւ ընդմիշտ հայրենիքին հետ մշտակայուն կամուրջներու հաստատումը եւ անոնց ամրագրումը պէտք է դարձնեն համազգային գոյատեւութեան անփոխարինելի օրինաչափ եւ երաշխաւորեն մեր հոգեմտաւոր փոխհաղորդակցութեան աշխարհատարած ցանցի ուժականութիւնը:

Այս իմաստով Հալէպ մի՛շտ ալ գտնուած է կամուրջներ կառուցելու յառաջապահ դիրքերու վրայ:

Հալէպ պիտի շարունակէ գոյատեւել, դարձեալ կայանալ ու կայունանալ, այնքան ատեն, որ անոր պատմական առաքելութեան հաւատացողներու փաղանգները դեռ կը շարունակեն մնալ ազգային յանձնառութեան պատնէշին վրայ:

Ե՛ս Հալէպն եմ ...



«Ախր ես ո՞նց ապրեմ առանց ինձ ...»


Սալբի Գասպարեան



Տեսակէտ

Անշպար Խօսք

ՆԱԽԱԶԵՌՆՈՂ ԻՐԱԻՍԷ՞Ր ԹԷ՛ ԱՂԱԶՈՂ ՊԱՀԱՆՋԱՏԷՐ



2018 թ. դարադարձի սեմին, կ'ուզենք վերլիչեցնել պատմական իրողութիւն մը, եւ քաղաքական ճշմարտութիւն մը՝ անշպար, անպաճոյճ, անողոք եւ առարկայական խօսքերով:

20-րդ դարի երկայնքին ստեղծուած՝ Արեւելահայաստանի երեք հանրապետութիւնները՝ վճռորոշ, կամ որոշիչ հետեւանքը չէին, մեր կողմէ նախաձեռնուած

ազգային ազատագրական արիւնալի պայքարին, կամ համակարգային երկու յեղափոխութիւններու՝ դրամատիրականին յառաջընթաց սոցիալիստականի անցումին, եւ՝ սոցիալիստականէն յետընթաց դրամատիրականի վերադարձին համար, այլ՝ դուրսէն հարկադրուած ու պայմանադրուած էին. դրսեկ էին, եւ միայն մասնակիօրէն հետեւանքն էին ներսէն՝ ինքնապաշտպանութեան արիւնալի ճակատամարտին, համակարգային արիւնալի ապստամբութեան եւ ոչ արիւնալի համակարգային փոփոխութեան զանգուածային ցոյցերու:

Առաջինը՝ հետեւանքն էր Անդրկովկասեան ՍԷՅՄին տարանջատումին, որ ճամբան բացաւ Արեւելահայաստանի մեկուսացումին, եւ Թուրքիոյ կողմէ՝ Պաթումի խաղաղութեան դաշնագիրը ստորագրելու համար պայման դնելու՝ Արեւելահայաստանի անկախութեան հռչակումը, անոր պարտադրելու համար ստրկական դաշնագիրը, եւ Արեւելահայաստան ստորագրեց զայն, եւ հռչակեց անկախութիւն, հակառակ՝ Սարդարապատի յաղթանակին, նախընտրելով՝ ստրկական խաղաղութիւնը, քանի որ կարող չէր շարունակելու պատերազմը...: Եւ Սիմոն Վրացեան գրեց՝ որ թուրքերը պայման էին դրել անկախութեան հռչակումը, եւ մենք՝ հիւանդ զաւակ ծնած մօր մը պէս՝ յայտարարեցինք անկախութիւնը... («Հայաստանի Հանրապետութիւն»):

Երկրորդը՝ հետեւանքն էր Հոկտեմբերեան Յեղափոխութեան յաղթանակին, եւ թէեւ՝ 1920 թ. Մայիսեան ապստամբութիւնը ճզմուած էր, Նոյեմբեր 29-ին՝ Արեւելահայաստանի իշխանութիւնը յանձնուեցաւ Խորհրդային Յեղկոմին:

Երրորդը՝ հետեւանքն էր Սովետ Միութեան կազմալուծումին, եւ Լեւոն Տէր Պետրոսեանի ղեկավարած ՀՀԸ-ն՝ զանգուածային խաղաղ ցոյցերով՝ առիթէն օգտուեցաւ յայտարարելու՝ անկախութիւն:

Այսքանը վերլիչեցնելու համար պատմական իրողութիւնը:

Իսկ քաղաքական ճշմարտութեան վերլիչեցումին համար կը գրենք հետեւեալը:



Ներկայիս՝ Սեուտ-Արաբիան ստանձնած է Թուրքիոյ դերը ՕԹԱՆ-ի մէջ, Իսրայէլի հետ գործակցաբար՝ ամերիկեան իմպերիալիզմի որոշումով, քանի որ Թուրքիա ձախողած ըլլալով Սուրիոյ մէջ, եւ Ռուսաստան՝ Սուրիոյ մէջ իր հզօր միջամտութեան շնորհիւ՝ տարածաշրջանին մէջ շահած ըլլալով անմրցելի հեղինակութիւն, Էրտողան՝ դիմաշրջում կատարած է Արեւմուտքէն՝ Արեւելք...: Մանաւանդ՝ երբ ամերիկացի հեղինակաւոր լեզուաբան եւ քաղաքակրթական վերլուծաբան Նօամ Չոմսքի կը խօսի ամերիկեան երագին հոգեհանգիստին մասին, իր "Requiem of American Dream" գիրքին մէջ...:

Այս դիմաշրջումը Թուրքիոյ՝ Էրտողանի իրատեսութեան արժանիքին, փրակմաթիզմին, պատեհապաշտութեան, կարելիին գիտակցելու ռեալ փոլիթիքին հետեւանքն է, ուր կարելի միակ նպաստաւորն է Թուրքիոյ համար, իսկ մասնակիօրէն հայանպաստ եւ միաժամանակ հայավսաս զարգացում մըն է...: Մասնակիօրէն հայանպաստ՝ քանի որ դէպի Ռուսաստան դիմաշրջումով եւ ՕԹԱՆ-էն հեռացումով՝ Թուրքիա պարտաւոր է հրաժարելու, գէթ ժամանակաւորապէս, իր փանթրքական ծրագրէն (որ ուղղուած է՝ Ռուսաստանի եւ Յայաստանի դէմ), եւ յարգելու՝ Ռուսաստանի դաշնակից Յայաստանի անկախութիւնն ու անվտանգութիւնը:

Կը մնայ՝ Արեւմտահայաստանի ազատագրութեան խնդիրը, որուն կապակցութեամբ Թուրքիոյ այս դիմաշրջումը՝ մասնակիօրէն հայավսաս է, որովհետեւ՝ կրնայ մասնակիօրէն տկարացնել Փութինեան Ռուսաստանի վճռականութիւնը՝ Թուրքիոյ պարտադրելով՝ ոչ միայն «Թուրքահայաստանի անկախութեան մասին» դէկրետին գործադրութեան հարցին մէջ, այլեւ՝ Սեւրի դաշնագրին եւ Ուիլսոնեան Իրաւարար Վճիռին կապակցութեամբ: Այսինքն՝ այս երեք միջազգային վաւերագրերուն ամբողջական գործադրութիւնը: Անոնք, որոնք ցանկատեսութիւն կը նկատեն Փութինեան Ռուսաստանի մտադրութիւնը՝ Թուրքիայէն պահանջելու այս երեք միջազգային վաւերագրերու գործադրութիւնը գէթ մասնակիօրէն, պէտք է ուշադրութեամբ կարդան Ռուսաստանի ներկայի եւ ապագայի գործակից Գերմանիոյ «ՏԷ Վելթ» թերթի 11 Նոյեմբեր 2012 թուակիր համարի «1918-2018... Յին Յակամարտութիւններ Կը Վերադառնան Իրենց Սկիզբին» վերնագրով վերլուծողական գրութեան հետեւեալ տողերը.

«Թուրքիա եւս այսօր՝ որեւէ ժամանակէ աւելի, մտահոգուած է իր երեկի դիրքին կորուստով... աշխարհ կ'ապրի այսօր՝ 1918 թուի անկայունութեան իրավիճակը... եւ հին հակամարտութիւնները առաջնահերթ պիտի ըլլան՝ 2018 թուին» (տես՝ «Ալ-Յայաթ»ի 22 Նոյեմբեր 2017 թուակիր համարը):

Այս համոզումը ունի նաեւ պետական վերնախաւը, եւ այս համոզումին հետեւանքն էր Գերմանիոյ ճանաչումը Յայոց Ցեղասպանութեան:

Սակայն, այս երեք միջազգային վաւերագրերուն գէթ մասնակի գործադրութիւնն անգամ կախեալ է Տարագիր Արեւմտահայութեան եւ Արեւելահայաստանի պետութեան միատեղ աշխատանքէն ու իրաւա-քաղաքական հետեւողական պայքարէն՝ միջազգային հարթակի վրայ, հրաժարելով՝ մեր ցարդ վարած աղաչական պահանջատիրութեան կրաւորական ու ձեռնպահ քաղաքականութենէն, որ կարծեք՝ հիմնուած է մեր երեք հանրապետութիւններուն դրսեկութեան նախընթացներուն կրկնուելու հաւանականութեան պատրանքին վրայ...:



Մինչեւ երբ՝ պիտի շարունակենք խաբուիլ մեր իսկ կողմէ յօրինուած պատրանքներէն ու ցանկատեսութիւններէն, եւ մասնք՝ անշարժ ու ձեռնպահ, երկինքէն սպասելով՝ մանանան...:

Ուր մնաց մեր ժողովուրդին յեղափոխական սարդարապատեան ու արցախեան ոգին: Կորսնցուցա՞ծ ենք մեր հաւատքը՝ մեր վերստին ծառանալու ուժին հանդէպ: Արդէն սկսած ենք հաւատա՞լ Մատթէոս Առաքեալին վերագրուած սա ստրկամիտ ու հալածախտական քարոզին. «Երանի սգաւորներուն. երանի հեգերուն. երանի անոնց որ հալածուած են՝ արդարութեան համար. երանի ողորմածներուն...», որոնք չեն պատկանիր Առաքեալի մը, այլ՝ շահագործող ու հալածող իշխաններուն ու դասակարգերուն:

Իմաստութեան սկիզբը՝ Աստուծմէ վա՛րսն է, թէ՛ մօտիկ անցեալի Արցախի դասը սորվիլն է: Աստուած՝ հաւատացեալէն, հաւատաւոր մարդէն՝ ոչ վախ եւ ոչ ալ ստրկութիւն կը պահանջէ, այլ՝ կը պահանջէ հաւատալ՝ Արցախի դասին: Այս ուրացող վերեւներու անհաւատները ժամանակավրէպ դարձած են այսօր՝ երբ մեր թշնամին, հիւլեական «ԱԲՈՓՕ» կայանը կը հիմնարկէ՝ Ռուսաստանի՝ մեր դաշնակիցին օգնութեամբ...: Արթնցէ՛ք պարոնայք անհաւատներ, որպէսզի չկորսնցնենք Նաեւ մեր վերջին ստրատեգիական դաշնակիցը, որուն շահերը կը համընկնին մեր ազգային գոյութեանական շահերուն հետ՝ փանթրքական վտանգին դէմ...:

Այսպիսի անհաւատներ՝ վա՛ր թող տապալուին իրենց ղեկավարի աթոռներէն: Թող սասանին ու փշրին անհաւատներու բարձր բերդերն անառիկ, եւ իյնան վար՝ անոնց պատնէշները՝ զրահապատ ետութեանց մենաշնորհային, եւ թող շուտով բացուին դռները՝ մեր ժողովուրդին կենսունակ ու մարտնչող ուժերուն ամջել...:

Այստեղ կ'ուզենք վերոյիշեցնել Էդիկ Յովհաննիսեանի հետեւեալ կանխագուշակումը՝ «ԴՐՕՇԱԿ»ի 15-28 Յուլիս 1993 թուակիր համարին մէջ, իր «Ուր Ենք Մենք» խորագրով գրութենէն.

«Մենք պետք է ունենանք յստակ դիրքորոշում՝ դաշնակիցներ շահելու համար, եւ չսսել այն աբսուրդը, թէ մենք անկախ ենք: ... Ռուսական ազգային շահերի ոլորտում է, որ Հայաստանը որոշ հետաքրքրութիւն է ներկայացնում: ... Աշխարհը շարժւում է դէպի ազգային կառոյց: Հաւանաբար մօտիկ ապագայում Չինաստան, Ճապոնիա, Գերմանիա եւ Ռուսաստան դառնան ազգային բեւեռի պաշտպաններ, եւ՝ ջախջախիչ հարուած տան՝ ամերիկա-սիոնական ապագային բեւեռին: Ազգային բեւեռի յաղթանակը անխուսափելի է... եւ ապագային բեւեռը կը խորտակուի վերջնականապէս: Հետեւաբար, մեր ներկայ կացութիւնը ստիպում է մեզ կանգնել՝ պատնէշի ազգային կողմում կանգնած բանակի շարքերում»:

•••

Հայ Սփիւռքը, որուն տուժած հայրենազրկեալ մեծամասնութիւնը՝ Տարագիր Արեւմտահայութիւնն է, որ պետք չէ սահմանափակուի՝ լոկ բարոյական ճանաչում ու դատապարտում մուրալու քաղաքականութեամբ, այլ՝ պետք է կեդրոնանայ իրաւաքաղաքական պայքարի միջազգային դաշտին մէջ, հետապնդելով սփիւռքակեդրոն քաղաքականութիւն, կեդրոնաձիգ ինքնակազմակերպումով, Արեւմտեան Հայաստանի պետական կառոյցներու ստեղծման նախաքայլերը արնելով, եւ Տարագիրի գիտակցութեան ընդհանրացումով, որ ոչ միայն կ'առաջնորդէ հայրենազրկեալի քաղաքական պայքարի



յանձնառութեան, այլեւ՝ շօշափելի, ստոյգ եւ գործնական նպատակ մը կը հայթայթէ հայապահպանումի ճիգին, որ պէտք չէ մնայ՝ ինքնանպատակ քարոզ, որ չունի հայրենագրկեալութեան գիտակցութեան քաշողական հզօր շարժառիթն ու հիմնաւորումը՝ հայապահպանումին:

Այսպիսի սփիւռքակեդրոն քաղաքականութեամբ միաւորուած եւ հզօրացած Հայ Սփիւռքը՝ շատ անելի հզօր նեցուկ մը կը հանդիսանայ Արեւելահայաստանին, քան՝ Հայաստանակեդրոն (Արեւմտահայաստանը նկատի չառնող) քաղաքականութիւնը: Արեւմտահայաստանը նկատի չունեցող Հայաստանակեդրոն քաղաքականութեան մահաբեր հետեւանքին մասին, Յ. Պալեան «ՆՈՐ ՅԱՌԱՋ»ի 26 Յունուար 2010 թուակիր համարին մէջ գրած է հետեւեալը՝ «Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ Ժողովուրդի Շահերու Շփոթ Կայ» վերնագրին տակ.

«Բռնագրաւեալ Հայաստանը եւ անոր ժողովուրդը՝ Արեւմտահայութիւնը, որպէս այդպիսին, Հայաստանի Հանրապետութեան մէջ տեղ չունին: Սփիւռքը եթէ այս կացութիւնը ըստ արժանւոյն չտեսնէ եւ չգնահատէ՝ կը կնքէ իր լուծարքը, կը թաղէ ազգի իրաւունքները...»:

Նաեւ՝ միայն այսպիսի միաւորուած, միակ գլուխ ունեցող Սփիւռքի գոյառումով է որ կարելի կը դառնայ ստեղծումը՝ իրօք եւ ճշմարտապէս «Համազգային Խորհուրդ»: Ըիշդ է թէ՛ Արեւելահայաստանի առկայութիւնը այսօր՝ շօշափելի իրականութիւն է, իսկ ստեղծուելիք Սփիւռքը այսօր գոյութիւն չունի տակաւին, սակայն Սփիւռքը՝ համահայութեան թիւին 80 տոկոսը կը կազմէ, որուն միաւորումով եւ հզօրացումով միայն՝ կարելի կրնայ դառնալ ուժճացումը՝ Արեւելահայաստանի 20 տոկոսին: Ուրեմն, սփիւռքակեդրոն քաղաքականութիւնը համահայկական գերագոյն եւ հեռանկարային շահերուն տեսակետէն՝ առաջնահերթն է:

Այս գրութեան հեղինակը բնա՛ւ յաւակնութիւնը չունի միա՛կ մունետիկը եղած ըլլալու սփիւռքակեդրոն քաղաքականութեան առաջնահերթութեան, քանի որ ամէն հայրենասէր ու տեսլական ունեցող անհատ կամ կազմակերպութիւն, արդէն անդրադարձած կ'ըլլան այս քաղաքականութեան ճշմարիտ առաւելութեան՝ Հայաստանակեդրոն (Արեւմտահայաստանը անտես առնող) քաղաքականութեան վրայ, եւ կարիքը չունին ու չեն սպասեր մէկու մը կոչին, կանչին կամ քարոզին, քանի որ՝ ինչպէս ըսած է ֆրանսացի հիւլեագետ Ժօլիօ Գիւրին, «Ճշմարտութիւնը առանց վիզայի կը ճամբորդէ...» բոլոր պայծառատես միտքերէ ներս:

Եւ սակայն, կրաւորական անդրադարձումը՝ ապարդիւն կը մնայ, եթէ պայծառատեսները դանդաղին, տնտնան ու ձեռնպահ մնան: Անհրաժեշտ է որ անոնք արագ շարժին, կազմակերպուին եւ զօրաշարժի մղեն Տարագիր Արեւմտահայութեան ներուժի բոլոր բաղադրիչները՝ հետապնդելու համար սփիւռքակեդրոն քաղաքականութիւնը, որպէսզի՝ կարողանան անելի լայնածաւալ աշխատանքներ իրականացնել, քան՝ իրարմէ անջատ անհատներն ու կազմակերպութիւնները, որոնք կը մնան տկար եւ կեդրոնախոյս, կամ իրար խաչաձեւող, յամրաքայլ ու ոչ արագաշարժ, մինչդեռ այսօր՝ աշխարհի քաղաքական զարգացումները արագընթաց են, եւ կը պահանջեն՝ որ մեր քաղաքական կամքը դրսեւորուի ոչ միայն հաւաքականօրէն, այլեւ արագընթաց ձեւով, ստեղծելու համար Տարագիր Արեւմտահայութեան կեդրոնական, ներկայացուցչական (ընտրովի) եւ իրաւական միակ լիազօր կառոյցը:



Ներկայացուցչականի, այսինքն՝ ընտրելի հանգամանքը, այն նախապայմանն է Միջազգային Հանրային Իրաւունքին, որպէսզի՝ այդ կառոյցը օժտուած նկատուի՝ իրաւական անձնաւորութեամբ (personne juridique), եւ հետեւաբար, Միջազգային Հանրային Իրաւունքի ենթակայի (sujet) կարգավիճակով, որպէսզի ընդունելի եւ լսելի դառնայ միջազգային ատեաններու կողմէ:

Ցարդ մեզի ծանօթ միակ կառոյցը Սփիւռքի մէջ՝ որ ընտրուած է, «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան» այն «Ազգային Ժողով»ն է, որ ընտրուած է 2014 թուին, 17,832 «քաղաքացի»ներու կողմէ, եւ՝ կը բաղկանայ 64 երեսփոխաններէ, որոնք եկած են հայկական 10 գաղթօճախներէ եւ գրաւեալ Արեւմտեան Հայաստանի մի քանի տակաւին չբացայայտուած քաղաքներէ...:

2004 թուին, Արցախի մէջ՝ 10 արեւմտահայերու նախաձեռնութեամբ հիմնուած «Արեւմտահայոց Ազգային Խորհուրդ»ի նախագահը՝ Արմենակ Աբրահամեան, որ ընթացիկ տարուան Հոկտեմբեր 21-ին, բանախօսութիւն մը տուաւ Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ, յիշեց նաեւ, թէ՛ արդէն «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան անձնագրեր կրող քաղաքացիներու թիւը այսօր հասած է՝ 22,000-ի», եւ թէ՛ «2018 թուի Դեկտեմբերին կայանալիք Ազգային Ժողովի նոր ընտրութիւններուն մասնակից պիտի ըլլան շատ անելի մեծ թիւով անձնաթուղթ կրող քաղաքացիներ»: Եւ անելցուց. «Իսկ եթէ Տարագիր Հայութեան ունեցած ահռելի մեծ միջոցներն ու ունեցած հնարաւորութիւնները գործի լծուին տոյն նպատակին համար, վստահ ենք, որ այս թիւը՝ շատ կարճ ժամանակի մէջ՝ կը դառնայ տասնապատիկ եթէ ոչ հարիւրապատիկ»:

Հետեւաբար, եթէ Տարագիր Արեւմտահայութիւնը հիմնական շրջադարձ չկատարէ եւ չյեղաշրջէ իր անաւտոն կրաւորականութիւնը, եւ միջազգային քաղաքական արագընթաց զարգացումներուն հանդէպ մնայ դիտորդի կարգավիճակին մէջ, մենք չենք կրնար օգտուիլ նոյնիսկ՝ միջազգային հայանպաստ զարգացումներէն: Հարկ է որ Տարագիր Արեւմտահայութիւնը գիտակցի իր հայրենագրկեալի ստիպողական դերի ուժին, եւ կիրարկէ զայն ճիշդ պահուն եւ ճիշդ ձեւով: Այս հարցին մէջ՝ մեր ներուժի տարբեր շերտերու որակական, կազմակերպուած եւ համադրական մասնակցութիւնը խիստ անհրաժեշտ է:

Ֆրիդրիխ Նիցչէ ըսած է. «Անցեալը՝ ապագան կը լուսաւորէ, իսկ ապագան՝ անցեալը»: Անցեալը մոռցած շարժում մը՝ չի կրնար լաւ ապագայ կերտել: Դժբախտաբար, միջազգային հարթակի վրայ՝ 1912-1920 տարիներուն, Պօղոս Նուպարի ծաւալած դիւանաքաղաքական կարեւոր աշխատանքին ունեցած իրաւական առանցքային ձեռքբերումները՝ մենք ոչ միայն չշարունակեցինք հետապնդել, այլեւ՝ ըստ արժանւոյն չկրցանք գնահատել, եւ մեր մամուլին ու քաղաքական գրականութեան մէջ չունեցան բաւարար անդրադարձում: (Այս մասին օգտակար աղբիւր մըն է Դոկտ. Վաչէ Ղազարեանի խմբագրութեամբ, այս տարի, Տպարան Շիրակէն լոյս տեսած վաւերագրերու ժողովածուն. «Արեւմտահայաստանի Ազգային Պատուիրակութեան Գործունեութիւնը 1915-1916» վերնագրով): Ընդհակառակը, Արեւելեան Հայաստանի իրերայաջորդ երեք նախագահները՝ Արեւմտեան Հայաստանի ի նպաստ այդ ձեռքբերումները գերեզմանեցին իրենց պարտուողական անպատասխանատու ելոյթներով ու քայլերով: Լեւոն Տէր Պետրոսեան՝ մեր պատմական իրաւունքները համարեց իռացիոնալ ռոմանտիկա, Ռոպերթ Քոչարեան յայտարարեց. «Ես ռոմանթիք չեմ՝ Հայաստան հողային պահանջ չունի Թուրքիայից», իսկ Սերժ Սարգսեան, «Ֆուլթոլային» դիւանագիտութիւն վարելով, ստորագրեց «Տիւրիխեան Փրոթոքոլ»ները, առանց նախապայմանի...: Ասոնք



մոռցան անցեալը եւ անցեալի ոչ միայն պատմական իրաւունքները, այլեւ՝ այդ իրաւունքները հիմնաւորող Պօղոս Նուպարի ձեռքբերումները:

Կասկած չկայ թէ՛ մեծ տերութիւնները լաւ կը ճանչնան Արեւմտահայաստանի հարցը, բայց, անոնց հարցին պարզապէս իրողական, հրապարակային ճանաչումին անգամ հասնելու համար, մենք պարտաւոր ենք՝ քաղաքականօրէն ներկայ ըլլալու միջազգային հարթակին վրայ՝ մեր զանգուածային ցոյցերով, հաւաքներով, իրաւատէրի ելոյթներով եւ մեր ներուժին ու վճռակամութեան ցուցադրումով: Որովհետեւ՝ մեծ տերութիւններու նեցակցութիւնը մեզի՛ կրնայ իրականանալ միայն այն ժամանակ, երբ մենք կը յաջողինք անոնց ցոյց տալ ոչ միայն մեր ուժականութիւնը, այլեւ՝ մեր եւ անոնց փոխադարձ շահերը: Իսկ մենք այդ փոխադարձ շահերը կրնանք ցոյց տալ միայն այն տերութիւններուն, որոնց ազգային շահերը կը համընկնին մերիններուն հետ՝ մեր երկու կողմերուն հասարակաց թշնամիին դէմ, ինչպէս է պարագան՝ փանթըքական ծրագրին դէմ՝ Հայաստանի եւ Ռուսաստանի շահերուն համընկնումին: Ֆրանսացի պատմաբան Էմիլ Տումերկ (Emile Doumèrgue), Սան-Սթեֆանօ-Պերիւնի օրերէն, խօսած է այս ճշմարտութեան մասին, զոր մեջբերած է Մեթր Կարապետ Իզմիրլեան՝ իր «Հայ Ժողովուրդի Քաղաքական Ճակատագիրը» հատորին մէջ.

Դիտորդի կարգավիճակին մէջ մնալով՝ մեր պահանջատիրութիւնը կը զգենու՝ աղաչանքի, մուրացիկութեան հանգամանք...:

Ներուժի ցուցադրումն ու փոխադարձ շահերն են, որոնք կրնան ցոյց տալ մեր «երկաթ շերտի»:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պէյրովթ

26 Նոյեմբեր 2017

Տեսակէտ

«Քաղաքականացած մտեցումէն անդին կամ անոր զուգահեռ պէտք է զարգացնել մտածողական մտեցում՝ ինքնութեան պատում մը»



ԽՍԲ. - Հոկտեմբեր 18-19ին, Պրիւսելի մէջ, Եւրոպայի Հայ դատի գրասենեակին կողմէ կազմակերպուած Եւրոպահայութեան 4-րդ համագումարին՝ «Ցեղասպանութեան յիշողութեան կարեւորութիւնը մեր պահանջատիրութեան ծիրէն ներս» վերնագիրը կրող զեկոյցով խօսք առաւ բացառիկ անձնաւորութիւն մը՝ Միհրան Տապաղ, որ Պոխումի համալսարանի պատմութեան բաժանմունքին մէջ Ցեղասպանութեան եւ սփիւռքներու հետազոտութեան կեդրոնի ԵՆ հիմնադիրն է ԵՆ

տնօրէնը: Իր տեսակին մէջ Սփիւռքի միակ համալսարանական կեդրոնը, որ բնականաբար կարելոր դերակատարութիւն ունեցած է գերմանական ժխտողական քաղաքական ուղեգիծին շրջումին մէջ, որ ի վերջոյ յանգեցաւ Գերմանիոյ կողմէ Ցեղասպանութեան ճանաչման: Կը ներկայացնենք փրոֆ. Տապաղի զեկոյցը իր եզակի բովանդակութեան պատճառով: Ան կ'արծարծէ սփիւռքահայութեան էութիւնը, այդ բարդ գոյամիճակը՝ շատ պարզ բառերով ու պատկերներով, յիշողութեան արարքէն մեկնած, «կորուստ»-ը ստանձնած, անով վերականգնած ինքնութեան շուրջ: Անոր կատարած մտածողական արարքը Հայ դատին ու պահանջատիրութեան տուաւ նոր որակ, քաղաքական եւ կուսակցական պայքարէն անդին, նոյնքան եւ թերեւս ալ ւելի պարտաւորեցնող, հաւատքի նոր հանգանակ մը, որուն բուն նպատակն է կորուստի գիտակցութեան զարթումը, կորուստին՝ թէ՛ անհատական եւ թէ՛ հաւաքական: Վերականգնել երկիրը, դէպքին անասելիութիւնը յիշողական արարքով, ինքնութեանական նոր պատումով: Չեկոյցը կը յեղաշրջէ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու միակողմանի ազգայնական ընկալումը: Սփիւռքը կը մնայ յարատեւ, հակառակ քաղաքական օրակարգին եւ պէտք է պայքարիլ անոր յարատեւութեան համար, որովհետեւ Սփիւռքը ինքն է յուշարձանը Դէպքին:

Միհրան Տապաղի զեկոյցը՝

«Ցեղասպանութեան յիշողութեան կարեւորութիւնը մեր պահանջատիրութեան ծիրէն ներս»

Յիշողութեան վերաբերեալ զեկոյցս այսօր պիտի կեդրոնացնեմ Սփիւռքի վրայ: Մեզի համար Սփիւռքը մնայուն իրականութիւն մըն է եւ այդ պատճառով ալ մասնաւոր հետաքրքրութիւն կը պահանջէ: Երբ Սփիւռքի մասին կը խօսիմ, այդ չի նշանակեր որ երկիրը իմ մտածողութենէս հեռու կը մնայ: Քանի մը ամիս առաջ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Պէյրութի մէջ համագումար մը կազմակերպած էր նուիրուած



սփիւռքեան ինքնութեան պահպանման եւ հզօրացման նիւթին: Այդ ժողովի ընթացքին ամենէն կարեւոր թեմաներն էին՝ լեզուն, Եկեղեցին, հաւատքը եւ Երկրի հետ կապերը: Սակայն իրականութեան մէջ այն ինչ որ կը կոչենք լեզու կամ ամանդութիւն, սփիւռքեան պայմաններուն մէջ միշտ ալ վտանգի ենթակայ են, նկատի ունենալով որ անոնք միշտ փոփոխութիւններու ենթարկուող եւ կորուստի դեմ յանդիման գտնուող տարրեր են: Ինչ որ Սփիւռքի մէջ մեզի կը պահէ յիշողութիւնն է եւ այս վերջինի հետ կապակցաբար՝ ինքնութեան պատումը: Ֆրանսացի ծանօթ ընկերաբան Մօռիս Յալպուաքս կ'ըսէ՝ «խումբի մը պատկանելու համար պէտք է յիշողութիւնը բաժնէ: Մոռացում կը նշանակէ հեռանալ այդ խումբէն»: Այդ իսկ պատճառով յատկապէս պիտի կեդրոնանամ յիշողութեան եւ ինքնութեան պատումի երեւոյթներուն վրայ: Ինքնութեան պատումի ամանդական մօտեցումը նախ Վարդան Մամիկոնեանի նշանաւոր խօսքն է՝ «Մահ ո՛չ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»: Այսինքն միշտ փորձել յաղթահարել ամեն տեսակ դժուարութիւն: Մեր նշանաբաններէն մէկն է՝ անկարելին փորձել, ինչ որ կ'ընենք արդէն: Սփիւռքի մէջ ալ կը փորձենք անկարելին՝ գոյատեւելու համար: Մինչեւ այսօր յաջողեցանք անկարելին կարելի դարձնել եւ կը շարունակենք այդ ընթացքը: Գիտէք, թերեւս աներեւակայելի էր, որ այսօր պիտի կարողանանք Պրիւսելի մէջ հաւաքուած պահանջատերի դիրքերէն խօսիլ: Ուրեմն ի՞նչ կը նշանակէ ինքնութեան պատում. ինչպէս ըսի այս առումով մենք նախ ունինք ամանդական մտածողութիւնը՝ Վարդանանցը, Եկեղեցին, հաւատքը, «ճմռան օրերը կու գան ու կ'երթան»-ը եւ այլն: Սակայն այս խնդրին հիմնական կետը՝ ինքնութեան պատումը կարելի դարձնող՝ յիշողութիւնն է: Խորքին մէջ ինքնութեան պատումը գործողութիւն մըն է, որ ո՛չ միայն մեր ողբերգական փորձառութիւնը իր մէջ կ'ամփոփէ, այլ նաեւ իւրաքանչիւր յետեղեռնեան պատում Սփիւռքի մէջ կը նշանակէ բացակայութեան մը հետ դեմ յանդիման գտնուիլ: Կը նշանակէ այդ անվերադառնալի բացակայութիւնը վերականգնել մեր յիշողութեան մէջ: Ինծի համար այդ բացակայութիւնը պէտք է նախ իբրեւ կորուստ սահմանել եւ զայն պատմելի դարձնել: Այսինքն ատիկա ո՛չ միայն մեր ամօրեայ կեանքին մէջ պատմել, այլեւ՝ մտածել փիլիսոփայական, մտաւորական եւ գրական կերպով:

Այդ ձեւով մտածելով կարելի կ'ըլլայ մեր փորձառութիւնը դարձնել մեր ինքնութեան հիմքը: Յաճախ մեզի կը տրուի ա՛յն հարցումը, որ եթէ Յայոց ցեղասպանութիւնը ճանչցուի յետոյ ի՞նչ պիտի ընենք: Այս հարցումի պատասխաններէն մէկը ըստ իս՝ այն է, որ նախ այդ ճանաչումը կարելի կը դարձնէ մեր ունեցած կորուստը վերականգնել մեր յիշողութեան մէջ՝ առանց կաշկանդուելու: Մեր Երկրին փրկութիւնը նաեւ այդ կորուստը մեր յիշողութեան մէջ վերականգնելն է: Յիշողութիւնը նաեւ մեր պահանջատիրութեան շարունակութիւնն է: Այլ խօսքով քիչ առաջ իմ նշած բացակայութեան վերականգնումը մեզի նաեւ պահանջատեր կը դարձնէ: Իմ խնդրանքս այն է, որ մենք քաղաքականացած մօտեցումէն անդին կամ անոր զուգահեռ պէտք է մտածողական մօտեցում մը եւս զարգացնենք եւ զոր ես կ'անուանեմ ինքնութեան պատում, որ հիմնուած է մանաւանդ յիշողութեան իրողութեան վրայ: Յիշողութիւնը բացակայութեան ներկայութիւնն է, անոր վերականգնումը: Երբ մենք հաւաքական յիշողութեան մասին կը խօսինք, հետեւեալ հարցումը մէջտեղ կու գայ, թէ այդ պարագային պատմութիւնը ի՞նչ դեր կը խաղայ: Պատմութեան, պատմագիտութեան եւ հաւաքական յիշողութեան միջեւ շատ կարեւոր տարբերութիւն մը կայ. պատմութիւնը անցեալի վերաներկայացումն է, արտացոլումն է, իսկ յիշողութիւնը ուժական (dynamique) աշխատանք մըն է: Յիշողութիւն կը նշանակէ ամեն օր մեր անցեալի փորձառութեան հիման վրայ մեկնաբանել ներկան: Ներկան մեկնաբանելու փորձով է, որ մենք կը շարունակենք Յայ մնալ: Մենք կորուստը, տառապանքը, ոչնչացումը յիշելով կը մօտենանք աշխարհին, եւ այդ



յիշողութիւնը ո՛չ թէ մեզի ազգայնամոլ կը դարձնէ, այլ մենք այդ ձեւով կը ներկայանանք իբրեւ անըմբռնելի ոճիրի մը յիշատակը կրող ժողովուրդ մը: Ասիկա աշխարհի մէջ մեզի եզակիութիւն մը կու տայ, որուն անպայման պետք է գիտակից ըլլանք: Կը կրկնեմ, որ մենք ազգայնամոլներ չենք: Վերջին շրջանին Հայաստանի մէջ ալ սկսած են շրջան ընել գոյցներ, որոնց համաձայն մենք պետք է ձերբազատիք զոհի հոգեբանութենէն: Ըստ իս առանց Աղէտի հետ կապուած յիշողութեան կարելի չէ Հայու ինքնութիւնը սահմանել: Ես հոս մասնաւոր վտանգ մը կը տեսնեմ. յիշողութիւնը եւ անոր հետ կապուած զոհի հասկացութեան վերջ տալու փորձը իրականութեան մէջ արեւմտեան քաղաքականութեան ծրագրերէն մէկն է: Այսինքն մոռացումով կ'ուզեն վերջ տալ անհանգիստ ընող յիշողութեան մը: Մա՛նաւանդ 2015-էն վերջ Արեւմուտքի քաղաքական յստակ խօսքն է, որ Աղէտէն աւելի պետք է հաշտութեան եզրի մասին մտածել: Այս գործին մէջ հայ գիտնականներն ալ իրենց մասնաւոր դերը ունին...: Մենք, ճիշդ է, զոհուած ժողովուրդ ենք, բայց նաեւ ապագային նայող եւ զոհուած ըլլալու պատասխանատուութիւնը կրող ժողովուրդ ենք: Սփիւռքը՝ ի՛նք մեր յիշողութեան ներկայութիւնն է, որովհետեւ զանազան երկիրներու մէջ կանգնեցուած յուշարձանները կրնան նաեւ մոռացութեան վայրեր դառնալ: Հետեւաբար Սփիւռքի մէջ մեր կատարելիք ամենէն կարելոր աշխատանքը պետք է ըլլայ այդ յիշողութեան գիտակից ըլլալը եւ անոր զարգացումը: Կեանքիս մէջ միշտ աշխատած եմ յիշողութեան գաղափարին վրայ կեդրոնանալ, որովհետեւ անիկա ինձի համար միա՛կ իրատես գաղափարն է, որ կ'ապահովէ մեր գոյութիւնը:

Աղբիւր՝ ՆՈՐ ՅԱՌԱՋ

Տեսակէտ

100-ամեակը պէտք է լինէր մեր ուսուցիչը. Միվիլներ



2018 թուականը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետութիւնների հիմնադրման 100-ամեակն է:

Հայաստանի և Վրաստանի համար 1918-ի Մայիսը պետականութիւնը վերականգնելու թուականն է, Ադրբեջանի համար՝ պետականութեան ստեղծման:

Հայաստանը 1918-ի Մայիսին իր պետականութիւնը վերականգնեց Բագրատունեաց անկումից մօտ 900 և Կիլիկեան պետականութեան կորստից շուրջ 500 տարի անց:

Երբ Բագրատունեաց Հայաստանը 1045-ին կորցրեց անկախութիւնը, հարեւան Վրաստանը իր պետականութիւնը կարողացաւ պահպանել մինչև 18-րդ դարի վերջը, 19-րդ դարի սկիզբը: Անդրկովկասի մուսուլմանների Ադրբեջան պետութիւնը աշխարհի քաղաքական քարտէսին առաջին անգամ յայտնուեց 1918-ի Մայիսին:

Այս երեք հանրապետութիւնների ինչպէս հիմնադրման ու զարգացման, այնպէս էլ անկման պայմաններն ու պատճառները տարբեր էին:

Ադրբեջանը բոլշեւիկացուեց 1920-ի Ապրիլին՝ փաստացի չդիմադրելով ռուսական 11-րդ Կարմիր բանակի ներխուժմանը: Հայաստանը դիմադրեց և՛ ռազմական, և՛ դիւանագիտական ճակատում, սակայն ընկաւ ռուս-թուրքական կամ բոլշեւիկ-քեմալական հարուածների տակ 1920-ի Դեկտեմբերի 2-ին: Վրաստանը իր անկախութիւնը կորցրեց ռուսական հարուածների տակ 1921-ի Փետրուարին:

Այս երեք հանրապետութիւնները 2018-ին նշելու են 100-ամեակները և դրանք լինելու են կամ պէտք է դառնան կարեւորագոյն իրադարձութիւններ: Անշուշտ, տրամաբանական կը լինէր, եթէ այս երեք հանրապետութիւնների ղեկավարութիւնները քաղաքական կամք դրսեւորէին և 100-ամեակի գոնէ մէկ համատեղ ձեռնարկ կազմակերպէին: Թբիլիսին նման ձեռնարկի օրինական և արդարացուած վայր կարող էր դառնալ, քանի որ երեք հանրապետութիւններն էլ հռչակուել են Վրաստանի մայրաքաղաքում: Հասկանալի է, որ Ադրբեջանը չի ցանկանայ նման քայլ կատարել՝ յղում անելով Ղարաբաղյան չլուծուած հակամարտութեանը:

Ինչպէ՞ս է նշուելու 100-ամեակը Հայաստանում

Արդէն իսկ մտահոգիչ և անլուրջ է, երբ Հայաստանի ղեկավարները 2018-ի կարեւոր իրադարձութիւններ են նշում և նոյն շարքին դասում Ֆրանկաֆոնիայի գագաթաժողովը, Երեւանի 2800-ամեակը և Հայաստանի Հանրապետության 100-ամեակը:



Ֆրանկաֆոնիայի գազաթաժողովը շուտ մոռացուող և անելի շատ քարոզական իրադարձութիւն է դառնալու: Անշուշտ, լաւ է, որ նման տարողութեան ձեռնարկ հիւրընկալելու է Յայաստանը:

Երեւանի 2800-ամեակի նշումը վիճելի է պատմական տեսանկիւնից: Վիճելի է նաեւ Էրեբունի-Երեւան կապը:

Յայաստանի Յանրապետութեան հիմնադրումը, մինչդեռ, վիճելի չէ, և կարելի է համարել հրաշք ու հայոց պատմութեան ամենակարեւոր ձեռքբերումներից: Մի պահ մի կողմ թողնենք, թէ ինչ պայմաններում և ինչպէս անձեւ քառսից ստեղծուեց Յայաստանի Յանրապետութիւնը: Մի պահ կողմ թողնենք, որ Յանրապետութիւնը ստեղծուեց 10-12 հազար քառակուսի կիլոմետր տարածքի վրա միայն: Եւ կրկնենք, որ Յայաստանի Յանրապետութեան անշուք ծնունդը հայոց պատմութեան հրաշքներից էր: Եւ այն իրողութիւնը, որ այսօր ունենք Յայաստան, որի զինուորները կանգնած են 42 հազար կիլոմետր տարածքով երկրի սահմաններում, պարտական ենք 1918-ի Մայիսին ու Յանրապետութիւնը կերտող հայրերին՝ Յովհաննէս Բաջազնունուն, Արամին, Դրոյին, Մովսէս Սիլիկեանին, միւս նուիրեալներին, բայց առաջին հերթին՝ Արարատեան աշխարհի հայ ժողովրդին:

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԸ ԼԻՆԵՐ, ԵԹԷ ԵՐԵՔ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵԿԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍԷ ԴՐՍԵՒՈՐԵԻՆ և 100-ԱՄԵԱԿԻ ԳՈՆԷ ՄԷԿ ԶԱՄԱՏԵՂ ԶԵՌՆԱՐԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԻՆ

2018-ի ընթացքում Յայաստանում և Սփիւռքում հաւանաբար կը լինեն 100-ամեակի բազմաթիւ միջոցառումներ:

Անկասկած, այդ միջոցառումներում անելի շատ իշխելու է պաթօսը, նշուելու են Յանրապետութեան լուսաւոր կետերը, հերոսացուելու են անհատներ, առանձին դրուագներ: Սա էլ բնական է, քանի որ 100-ամեակը տօն է, և տօներին բնորոշ են պաթօսը, ծափերը, հերոսական անցեալի փառաբանումը:

Այս ամէնի հետ մէկտեղ շատ կարեւոր և անհրաժեշտ է, որ 100-ամեակը դառնայ ինչպէս ներշնչանքի ու հպարտութեան, այնպէս էլ դասեր քաղելու առիթ և աղբիւր:

100-ամեակը պէտք է դառնայ Յանրապետութեան հիմնադիր հայրերի՝ ժողովրդին ու պետութիւնը փրկելու հերոսական մաքառումները գնահատելու, բայց նաեւ կոպտագոյն սխալները մատնանշելու ճիշտ ժամանակ:

Մենք պէտք է և նշելու ենք Սարդարապատի և Բաշ Ապարանի հերոսամարտերը, բայց պէտք է նաեւ քաջութիւն ունենանք (առանց մատներ տնկելու այս կամ այն անհատի, այս կամ այն քաղաքական ուժի հասցէին) խօսելու Կարսի և Սուրմալուի շրջանների կորստի մասին:

Եթէ Սարդարապատն ու Բաշ Ապարանը որեւէ անհատի ու քաղաքական ուժի ձեռքբերումն է միայն (ինչը ճիշտ չէ), ապա Կարսն ու Սուրմալուն եւս պէտք է լինի անհատի ու քաղաքական ուժի կոպտագոյն սխալը (ինչը նոյնպէս ճիշտ չէ):



Հայաստանի Հանրապետութեան ծագման, զարգացման և անկման 1000 օրերից իւրաքանչիւրը պէտք է դառնայ մեր բաց, կառուցողական քննարկման թեման՝ զերծ բոլոր տեսակի տաբուներէից:

Այո՛, 1918-ի Մայիս-Հունիսը մեր հազարամեակների պատմութեան ջրբաժանն է. մինչեւ 1918-ի Մայիս չունէինք պետութիւն և պետականութիւն, իսկ 1918-ի Մայիսից ունեցանք, կերտեցինք այդ պետականութիւնն ու պետութիւնը: Բայց այս իրողութիւնը չպէտք է մեզ ստիպի չխօսել բացթողումների ու սխալների մասին:

Մենք պէտք է դասեր քաղենք նաեւ մեր պատմութիւնից:

100-ամեակը պէտք է լինէր մեր ուսուցիչը:

Թաթուլ Յակոբեան

Սիվիլներ

Տեսակէտ

Հայաստանն ու արտագաղթը՝ պատմութեան հազարամեայ քառուղիներից առ այսօր

Արթիւր Եղիազարեան Պատմաբան, հրապարակախօս



Արտագաղթը կամ Էմիգրացիան (լատ.՝ emigro – «վտարուում եմ» բառից) քաղաքական, սոցիալական, տնտեսական կամ այլ շարժառիթներով հայրենիքից հարկադիր կամ կամաւոր հեռանալն է մէկ այլ երկիր, մշտական կամ ժամանակաւոր բնակութեան նպատակով: Արտագաղթը, իր բոլոր բացասական ընկալումներով հանդերձ, բնական գործընթաց է,

որն ուղեկցել է մարդկութեանը՝ առաջացումից սկսած: Արտագաղթի ճանապարհով ողջ երկիր մոլորակը ժամանակին բնակեցուեց նախամարդկանց կողմից եւ ձեւաւորուեց ժամանակակից օյկումենը (Երկրագնդի՝ մարդկութեամբ բնակեցուած հատուածը): Բայց սա, որպէս մարդ տեսակ՝ ընդհանուր ընկալումով: Էթնոսների ձեւաւորումով, իր բնօրրանում արտագաղթը ընկալում է որպէս բացասական երեւոյթ: Երկրների, ժողովուրդների դիմագիծը ոչ մի երեւոյթ այնքան չի փոխել, որքան մարդկային մեծ խմբերի տեղաշարժերը: Դրանց հետեւանքով պատմութեան թատերաբեմից անհետացան մի շարք էթնոսներ ու ծնուեցին նորերը, քարտէսի վրայից վերացան ու յայտնուեցին պետութիւններ, իրենց տեղը զիջեցին մի շարք լեզուներ ու մշակոյթներ, բայց նրանց փոխարէն յայտնուեցին նորերը:

Արտագաղթին նպաստում են հիմնականում երկու խմբի պայմաններ: Դրանք են.

1) Դուրս մղող պայմաններ: Սրանք կապուած են անհատի (խմբի)՝ իր բնակավայրում գոյութեան ծանր կամ անբաւարար պայմանների հետ (աշխատանքի բացակայութիւն, ցածր կենսամակարդակ, մասնագիտական առաջխաղացման դժուարութիւններ, ազգամիջեան, կրօնական հակամարտութիւններ, սով, բռնապետութիւն, պատերազմներ, տնտեսական ճգնաժամ, տարերային-Էկոլոգիական, տեխնաճին աղէտներ եւ այլն):

2) Ձգող պայմաններ: Այլ վայրում ապրելու գրաւիչ մի քանի պայմանների առկայութիւնը: Դրանցից են. նախընտրելի աշխատանք՝ բարձր վարձատրութեամբ կամ եկամտով, բարձր կենսամակարդակ, սոցիալական կարգավիճակի բարձրացման մեծ հնարաւորութիւններ, սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կայունութիւն, ազգամիջեան եւ միջկրօնական հանդուրժողականութիւն, բարենպաստ բնակլիմայական պայմաններ եւ այլն):

Այժմ վերադառնանք հայկական իրականութիւն: Յետ վերադառնալով դարերի խորք, տեսնում ենք, որ արտագաղթը հայկական լեռնաշխարհում շատ աւելի հին պատմութիւն ունի, քան մեր ժամանակակից էթնիկ գիտակցութիւնը: Հայկական լեռնաշխարհը, համաձայն մի շարք հայ եւ օտարերկրացի մասնագետների փաստարկուած վարկածների, հանդիսանալով հնդեւրոպացիների (արիացիների) նախահայրենիքը, դեռեւս



հազարամեակներ առաջ, ինչպէս օրկանիզմում սիրտն է արիւնը մղում՝ պարբերաբար իրենից մարդկային խմբեր է մղել լեռնաշխարհից դուրս, որոնք հաստատուելով օյկումենի տարբեր անկիւններում՝ հիմք են դարձել հին եւ ժամանակակից մի շարք ազգութիւնների եւ պետութիւնների ձեւաւորմանը: Այդ ժողովուրդներին այսօր յայտնի են հնդեւրոպական լեզուաընտանիքին պատկանող եթնոսներ՝ ինքնուրոյն եթնիկ գիտակցութեամբ: Այս ցեղերն ու ցեղախմբերը հայկական լեռնաշխարհից արտագաղթել են գրեթէ հաւասարաչափ կրելով վերոգրեալ երկու խմբի՝ դուրս մղող եւ ձգող պայմաններից մի շարք յատկանիշներն ունենալով: Մարդկային խմբերը լեռնաշխարհում շատացել էին, ու անհրաժեշտութիւն էր առաջացել դուրս գալ դէպի նոր կենսատարածքներ: Յնդեւրոպական այն ցեղերն ու ցեղային միութիւնները, որոնք մնացին հայկական լեռնաշխարհում ու նրա յարակից տարածքներում՝ հիմք հանդիսացան հայ ազգի եւ հայկական պետականութիւնների ձեւաւորման համար:

Հայ իրականութեան մէջ առաջին յիշատակուող մեծ արտագաղթը ձգող պայմաններով էր: Դա Տիգրան Մեծի օրօք Կիլիկիայում հաստատուելն էր: Եւ սա միակ ու բացառիկ դէպքն է, երբ այդ ու յետագայ դարերի արտագաղթը յանգեցրեց նրան, որ հայկական լեռնաշխարհից դուրս հայկական գաղթօճախը ծնունդ տուեց հայկական պետականութեան, ի դեմս Կիլիկիայի Հայկական Թագաւորութեան: Մնացած բոլոր դէպքերում գաղթօճախները, որքան էլ ինչ որ շրջանում կենսունակ լինեն, վաղ թէ ուշ՝ դատապարտուած են ձուլման ...

Պատմութեան ընթացքում Հայաստանից հիմնական զանգուածային արտագաղթերը սկսել են պետականութիւնների անկումներից յետոյ: Դա հիմնականում պայմանաւորուած է օտար տիրապետման հետ, երբ մեծանում է ֆիզիքական ոչնչացման հաւանականութիւնը, կեղեքումը՝ յանգեցնելով սոցիալական անկման, ազգային եւ կրօնական խտրական վերաբերմունքի եւ այլն: Այն յատկապէս աւելի սուր դրսեւորուեց արաբական տիրապետութեան օրօք (արտագաղթում էին հիմնականում հարեան Բիւզանդական կայսրութիւն, ինչի արդիւնքում հայերը լուրջ դիրք գրաւեցին այնտեղ, անգամ հայկական ծագումով կայսերական դինաստիա ծնունդ առաւ), թուրք սելճուքների, մոնկոլ-թաթարների, ագ-գոյունլու եւ գարա-գոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետման, պարսկական եւ օսմանեան տիրապետութիւնների ժամանակ: Բացի օտար տիրապետութեան բերած արհաւիրքներից՝ արտագաղթին նպաստել են նաեւ բնական աղետները, մասնաւորապէս՝ երկրաշարժը: Երկրաշարժի հետեւանքով, օրինակ, Անիի ու յարակից բնակավայրերի բնակչութիւնն արտագաղթեց դէպի Դրիմ, Ուքրանիա եւ Լեհաստան, որտեղ ժամանակին հայկական մեծ գաղթավայրեր ձեւաւորուեցին (այդ արտագաղթի արդիւնքում ձեւաւորուած սփիւռքն այլեւս չկայ, ձուլուեց դարերի ընթացքում): Սրանք հիմնականում համապատասխանում էին արտագաղթի դուրս մղող պայմաններին:

Հայկական լեռնաշխարհի տարածքում տեղի են ունեցել նաեւ դրական հետեւանք ունեցող միկրացիոն տեղաշարժեր: Բայց դրանք չեն դիտուում որպէս ներքին միկրացիոն շարժեր, քանի որ Հայկական լեռնաշխարհը բաժանուած էր մի քանի պետութիւնների միջեւ, հետեւաբար, Հայաստանի մի հատուածից, որը գտնուում էր մի պետութեան ենթակայութեան տակ, տեղաշարժուելով մէկ այլ հատուած, որը գտնուում էր մէկ այլ պետութեան ենթակայութեան տակ՝ դիտարկուում է որպէս արտագաղթ: Օրինակ, 19-րդ դարասկզբում՝ Օսմանեան կայսրութեան Երզրումի վիլայեթից հայ բնակչութեան հաստատումը Ջաւախքում, Պիթլիսի ու Վանի վիլայեթներից՝ ներկայիս Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի եւ Արմաւիրի մարզերի տարածքում, պարսկական տիրապետութեան տակ գտնուող Խոյ, Սալմաստ, Ուրմիա, Մակու եւ այլ հատուածներից՝ Վայոց Ձորի ու



Արարատի ներկայիս մարզերի տարածքում: Այս արտագաղթերի արդիւնքում կրկին հայաշատ դարձաւ Արեւելեան Հայաստանը, որը դարերով (յատկապէս՝ Շահ-Աբասի օրօք) գրեթէ հայաթափուած էր: Այս արտագաղթերը յայտնի են «ներգաղթ» անունով, եթէ դիտուում է ներկայիս Հայաստանի բնակչութեան աչքերով եւ վերաբնակեցում՝ եթէ դիտուում է ռուսական կայսրութեան աչքերով: Բայց իրականում դրանք վերոնկարագրեալ «դուրս մղող» եւ «ձգող» պայմանների առկայութեամբ արտագաղթեր էին՝ քանի որ դատարկուում էին այլ պետութեան տիրապետութեան տակ գտնուող բուն հայկական պատմական մի շարք տարածքներ: 19-րդ դարի 20-ական թուականների վերջի ռուս-թուրքական պատերազմի ու այնտեղից հայերի արտագաղթի արդյունքում հայերի թիւը բաւականին նուազեց Արեւմտեան Հայաստանի տարածքում, եւ առաջին անգամ հայերն այնտեղ չկազմեցին բնակչութեան 50%-ից աւելին, չնայած մնացած բոլոր եթնոսներից իւրաքանչիւրից թուաքանակով աւելի էին:

Հայ իրականութեան ամենամեծ արտագաղթը 20-րդ դարասկզբի Հայոց Ցեղասպանութիւնն էր, որի արդիւնքում Արեւմտեան Հայաստանը դատարկուեց իր բնիկ եթնոսից ու դադարեց առ այսօր հայ կեանքի մասը կազմելուց: Ցեղասպանութիւնից փրկուածներն արտագաղթեցին ներկայիս Հայաստանի տարածք ու աշխարհի տարբեր անկիւններ՝ ծնունդ տալով նոր գաղթօճախների կամ երկրորդ շունչ տալով այն գաղթօճախներին, որոնք արդէն մարում էին (վաղ թէ ուշ՝ բոլոր գաղթօճախներին էլ սպառնում է ձուլումը, յատկապէս կլոպալացման մեր ժամանակաշրջանում...):

Բոլոր դարերում էլ եղել են ձգող պայմաններով արտագաղթեր, որոնք աւելի շուտ կարելի է անուանել աշխատանքային արտագաղթեր: Հայ իրականութեան մէջ այդ տեսակ արտագաղթը կոչւում էր պանդխտութիւն կամ դարիպութիւն: Այս տեսակի արտագաղթը տարբերուում էր նրանով, որ հիմնականում ընտանիքը մնում էր բնօրրանում, իսկ աշխատունակ տարիքի տղամարդկանցից մեկնում էին օտար ափեր՝ ընտանիքի համար միջոցներ վաստակելու համար: Այս արտագաղթողների զգալի մասն ի վերջոյ վերադառնում էր հայրենի տուն, եւ քչերն էին կարողանում յետագայում ընտանիքն էլ տանել: Սա պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ հիմնականում օրավճար գումար էին վաստակում, որի մի մասով ապրում էին, միւս մասը տուն ուղարկում, եւ քանի որ չէին կարողանում այնքան վաստակել, որ օտար ափերում տուն ձեռք բերէին, իսկ բնօրրանում ունէին ապրելու տեղ՝ հետեւաբար տարիներ անց, երբ անաշխատունակ էին դառնում՝ վերադառնում էին:

Արտագնայ աշխատանքի համար արտագաղթը՝ ձգող պայմանների յատկանիշներով, պահպանուեց նաեւ խորհրդային իշխանութեան տարիներին: Յատկապէս՝ կապուած խամ-խոպան հողերի իւրացման եւ մշակման՝ պետական քաղաքականութեան հետ, ինչպէս նաեւ՝ ընդլայնակէայ արտադրութիւն կազմակերպելու կամ այնտեղ աշխատելու հետ (խորհրդային տարիներին նրանց անուանում էին «ցեխափկներ»):

Հայաստանի վերանկախացման անցած 26-27 տարիներին արտագաղթը հիմնականում պայմանաւորուել է հայ-ատրպէճանական պատերազմով, դրա ու ԽՍՀՄ փլուզման արդիւնքում առաջացած սոցիալ-տնտեսական դժուարութիւններով: Եթէ 80-ականների վերջերին եւ 90-ականների սկզբներին հանրապետութիւնից բնակչութեան արտահոսքի պատճառները բազմազան ու տարաբնոյթ էին, ապա յետագայում, մասնաւորապէս 1995-ից ի վեր, Էմիկրացիոն հոսքերը կրեցին ընդգծուած պատճառականութիւն: Այդ շրջանում



իրականացուած ուսումնասիրութիւններն ու հարցումները ցոյց են տալիս, որ արտագաղթի գործընթացում գերակայ դիրք է գրաւում տնտեսական դրդապատճառներով բնակչութեան արտահոսքը: Հարցման մասնակիցների 2/3-ը որպէս արտագաղթի հիմնական դրդապատճառ համարում են աշխատանքի հետ առնչութիւն ունեցող հանգամանքները՝ աշխատատեղերի (այդ թւում՝ մասնագիտական) բացակայութիւնը կամ սղութիւնը, աշխատանքի վարձատրութեան ցածր մակարդակը եւ ինքնուրոյն տնտեսական գործունեութեամբ զբաղուելու բարդութիւնները, երկրում առկայ անօրէնութիւնները: Յետագայում անցկացուած հարցմանը մասնակցած տնային տնտեսութիւնների շուրջ 15%-ի անդամները լրացնում են արտագնայ աշխատանքների մեկնածների շարքերը: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ աշխատանքային էմիկրացիան շարունակում է եական դեր ունենալ արտագաղթի խճապատկերում:

Վերջին տարիներին, ֆոկլուս խմբերի միջոցով շուրջ 1500 անձանց շրջանում իրականացուած հարցումների արդիւնքում (թէ որո՞նք են արտագաղթի պատճառները, եւ ի՞նչ պէտք է փոխել՝ չարտագաղթելու համար) տարբեր պատճառների մէջ որպէս առաջնային նշուել են հետեւեալները.

ա) Աշխատանք՝ արժանապատիւ վարձատրութեամբ,

բ) Տուն (բնակարան) ձեռք բերելու հնարաւորութիւն,

գ) Օրէնքի առաջ բոլորի հաւասարութիւն:

Անկախութիւնից ի վեր Հայաստանից իրականացուող ժամանակաւոր եւ մշտական միկրացիայի հիմնախնդիրը պետական մակարդակով յստակ կարգաւորուած չէ:

Որոշ մասնագետների գնահատմամբ՝ հանրապետութիւնից գաղթած բնակչութեան թիւը կազմում է աւելի քան մէկ միլիոն երեք հարիւր հազար մարդ: Սա ժողովրդագրական աղէտի կարող է յանգեցնել: Նման արտագաղթը բազմաթիւ խնդիրներ եւ հարցեր է դնում ինչպէս պետութեան, նրա անվտանգութեան, այնպէս էլ հասարակութեան առջեւ եւ պահանջում, որ անյապաղ ձեռնարկուեն գործուն քայլեր ստեղծուած իրավիճակը բարելաւելու, արտագաղթի սոցիալական, տնտեսական եւ իրաւական պատճառները վերացնելու եւ դրա թողած հետեւանքների վրայ դրական ներգործութիւն ունենալու ուղղութեամբ:

«Անալիթիքոն»



Տեսակէտ

Մենք՝ հայերս, պէտք է առերեսուենք մեր պատմութեան հետ



Հայոց նոր և նորագոյն քաղաքական պատմութեան մասին իմ հրապարակումները, տարբեր գրքերից ու մամուլի էջերից մեջբերումները, արխիւային նիւթերը նորովի ներկայացնելը արժանանում են ամենահակասական արձագանգների:

Ոմանք հրապարակաւ և անձնական նամակագրութեամբ ողջունում են և աջակցութիւն յայտնում՝ գրելով, որ շատ կարելոր մանրամասների

տեղեակ չեն եղել, և ճիշտ է մեր պատմութիւնը բազմակողմանի, սթափ, մերկ ու առանց ռազմահայրենասիրական պաթոսի ներկայացման այդ ձեւը:

Միւսները հրապարակաւ քննադատում են՝ բերելով բազմաթիւ պատճառներ:

Օրինակ, որ թուրքն ու ադրբեջանցին կարող են օգտուել դրանից, երբ ես, մեջբերելով վարչապետ Ալեքսանդր Խատիսեանին, գրում եմ, որ 1918-ի աշնանը Հայաստանը ջանքեր է թափել ջարդարար Էնվերի միջոցով ցորեն ստանալ Ադրբեջանից:

Կամ՝ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրման 100-ամեակին ընդառաջ ուղղակի անընդունելի է, ասենք, փորձել հասկանալ և քննարկման նիւթ դարձնել Սարդարապատի հերոսամարտի և Մայիս 28-ի միջեւ կապը:

Երրորդները ինձ մեղադրում են, որ ես պատմութիւնը ընտրողաբար եմ ներկայացնում, երբ բառացի մեջբերելով վարչապետներ Խատիսեանին, Սիմոն Վրացեանին, ազդեցիկ Ռուբեն Տէր-Մինասեանին՝ յիշեցնում եմ, որ թուրքերը Մայիս 28-ին վերջնագիր են ներկայացրել:

Չորրորդները գրում են, որ ես պատմութեան կոնտեքստը ուղղակի չեմ հասկանում: Այս վերջին խումբը ուշագրաւ է նրանով, որ հայոց պատմութեան որեւէ շրջանի մասին գիտական յօդուած, գիրք կամ որեւէ այլ բան չի գրել երբեք:

Քննադատողների մի մասը անկեղծաբար խոստովանում է, որ մեր հրապարակած արխիւային հրապարակումներից է տեղեկացել, որ Պաթումի դաշնագիրը, որով Օսմանյան կայսրութիւնը ճանաչեց Հայաստանը, ունեցել է շարունակութիւն Ալեքսանդրապոլում, և դաշնագրին կից կան մի քանի յավելուածներ, որոնք ոչ պակաս կարելոր են, քան բուն դաշնագիրը:

Որ 1919-ի գարնանը երկու հայեր մտել են Մուսավաթական Ադրբեջանի վարչապետ Ուսուպեկովի կառավարութեան մէջ:

Որ 1918-ի յունիսից մինչև նոյեմբեր Հայաստանն ու Օսմանյան կայսրութիւնը եղել են դաշնակիցներ, ճիշտ է՝ պարտադրուած դաշնակիցներ, ավելի յստակ՝ նորանկախ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը եղել են Զառեակ միութեան՝ Գերմանիայի, Օսմանեան կայսրութեան, Աւստրո-Յունգարիայի և Բուլղարիայի կրտսեր դաշնակիցները:



Դրուագների այս շարքը, որ կտրուկ հակասութեան մէջ է մտնում այսօրուայ հայ քաղաքական մտքի ու Հայաստանի և աւանդական սփիւռքի որդեգրած քաղաքականութեան հետ, կարելի է շարունակել, բերելով բազմաթիւ այլ մանրամասներ, որոնց յիշելը այսօր պարզապէս ձեռնտու չէ:

Բարեբախտաբար, պէտք է արձանագրենք, որ քննարկման և քննադատութեան որակն ու բառապաշարը հիմնականում պահւում է պատշաճ մակարդակի վրայ՝ առանց անձնական վիրաւորանքների: Սա չափազանց կարելոր է, որովհետեւ միայն այդ պայմաններում է հնարաւոր քննարկել մեր պատմութեան ամենացաւոտ, հակասական դրուագները:

Ինձ յանդիմանում են, թէ ինչ կարիք կայ յիշեցնել, որ հայ աւանդական երկու կուսակցութիւններ՝ ՍԴՀԿ-ն ու ՀԶԴ-ն, շփումներ և համագործակցութեան անցեալ են ունեցել երիտթուրքերի՝ Իթթիհատի ու Նաեւ Իթիլաֆի հետ:

Որ երբ հայ ժողովուրդը ցեղասպանութեան էր ենթարկւում Արեւմտեան Հայաստանում, Օսմանեան խորհրդարանի հայ պատգամաւորների մի մասը շարունակում էր ջերմ շփումներ պահպանել թուրք շարդարարների հետ:

Որ 1918-ի մայիսից մինչև նոյեմբեր Հայաստանի պաշտօնեաները բազմաթիւ հանդիպումներ ու խնճոյքներ են ունեցել նոյն այդ շարդարարների՝ Էնվերի, Թալեաթի ու միւս երիտթուրք ռճրագործների հետ:

Որ հայ բանագնացներից մէկը շնորհակալութիւն է յայտնել սուլթանին, քանի որ նրա բարեհաճ վերաբերմունքի շնորհիւ Նաեւ հնարաւոր եղաւ ունենալ Հայաստանի Հանրապետութիւն:

Եթէ մեզ մեր պատմութեան բոլոր էջերը չեն հետաքրքրելու, ապա պատմութեան ի՞նչը պէտք է հետաքրքրի: Պայթոսն ու հրաշապատումները:

Եթէ մենք չենք կարողանում այլոց պատմութիւնից դասեր քաղել, ապա ինչո՞ւ չպիտի գոնէ դասեր քաղենք մեր պատմութիւնից:

Լաւ, թողնենք 20-րդ դարի առաջին երկու տասնամեակների պատմութիւնը, թէեւ չպէտք է թողնել, այլ կարդայ, կրկին կարդայ ու հասկանալ այն:

Մենք իրաւունք ունե՞նք խորքային վերլուծութեամբ հասկանալ Խորհրդային Հայաստանը, Արցախեան շարժումը և նրա դերակատարներին, Հոկտեմբերի 27-ը, Մարտի 1-ը...

Ինչո՞ւ ենք վախենում մեր պատմութիւնից, երբ մեր պատմութեան բոլոր դրուագների հետ առերեսուելը օգտակար է առաջին հերթին հայոց պատմութեան և այսօրուայ Հայաստանի համար:

Թաթուլ Յակոբեան

ՍիվիլՆեթ



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ամեն ինչ խառնաշփոթի մէջ է...Ամեն ինչ իրար է խառնուած...Ո՞րն է ճիշդը, ո՞րն է սխալը...Ո՞րն է իրաւը, ո՞րն է սուտը...Ո՞րն է անկեղծը, ո՞րն է կեղծը...Կարծեք դիտումնաւոր կերպով, ամեն արժեչափ գլխիկայր է շրջուած, որպէսզի մարդիկ ապրին ուղեմոլոր, ուղեկորոյս...Եւ ինկարկեն միայն սպառողական քաղաքակրթութեան քարոզած «ազատութեան», որ խորքին մէջ

«չազատութիւն» է...նիւթին եւ նիւթապաշտութեան, ընչաքաղցութեան եւ շահամոլութեան նորօրեայ գերութիւն կամ ստրկամտութիւն, ուր ջնջուած են ազգ ու պատմութիւն, ընտանիք եւ ինքնութիւն, բարոյական ըմբռնումներ եւ առաքինութիւններ...

.....

Այլասերումը՝ հոգիներու տակաւ առ տակաւ աղճատումն է, բարոյական արժեքներու խաթարումը, սրբութիւններու պղծումը, մշակոյթի ապամշակութեացումը...տակաւին՝ մարդկային բնագոյններու եւ կիրքերու վայրենացումն է ան, եւ քայլ առ քայլ մարդ էակի անմարդկայնացումը, անասնացումը...Մարդկային հոգին անեղծ եւ անխաթար պահելը դարձեր է ներկայ ժամանակներու թերեւս գերագոյն մարտահրաւերը...Եւ փրկութեան ուղին՝ մարդ-անհատին եւ ազգային հաւաքականութեան համար...

.....

Ապրելով կը սորվիս վստահիլ լոկ սեփական ոյժերուդ, չապաւինիլ ծանօթ-բարեկամի զօրավիզին...Ապրելով կը պնդանաս, կը զօրանաս, կաղնիին նման հաստարմատ, որ չի տատանուիր փչող քամիներէն...Ապրելով կը սորվիս արժեւորել դեմքերն ու դէպքերը, որպէս անցողիկ անկթարթներ՝ ժամանակի լայնահուն տարածութեան մէջ... Կը դառնաս աւելի հանդուրժող, համբերատար, լայնախոհ կեանքի երեւոյթներուն նկատմամբ, որոնք քամիին նման կու գան ու կ'երթան անհետ...Կը սորվիս տեսնել ու ընկալել ամեն ինչ, որպէս հիւլէներ տիեզերական անսահմանութեան մէջ...: Այս բոլորը էական մասն են այն իմաստնութեան, որ կու գայ ժամանակին հետ, եւ զոր կարելի չէ սորվիլ միայն գիրքերէն, կամ գրասեղանէն վրայ...Եւ որուն համար կը վճարես յաճախ գուցէ շատ աւելի, քան ուսման բարձր վկայականի մը ձեռքբերման...

.....

Առողջ ինքնաքննադատութիւնը դրական լիցքեր կը հաղորդէ անհատին, փոխան ժխտականի, քանզի ան իր մէջ ունի նոր վճռակամութիւն, նոր յանձնառութիւն՝ դասեր քաղելու սեփական սխալէն, սխալներէն եւ խրատուիլ անոնցմէ...աւելի լաւ գալիքի մը կերտումին համար...Առանց նման ինքնաքննադատութեան, կեանքի ճահճացումը անխուսափելի է, քանզի կայ միշտ ինքնակատարելագործուելու անվերջ կենսընթաց...



.....

Չանգուածները կը քնացնեն տարբեր քնաբերներով, օրօրներով, ազատութեան անունով, մարդկային իրաւունքի անունով, բարօրութեան անունով...Եւ կը սպառնան ջնջել ընտանիք ու ազգութիւն, հայրենիք ու պատմութիւն, դիմագիծ ու մշակոյթ...որպէսզի անոնք դառնան դիւրաւ կառավարելի, խամաճիկներու պէս ձեռնավարելի....

.....

Կը խօսին մարդկային իրաւունքներէն, բայց օր ցերեկով կը կոխկրտեն զանոնք...Կը խօսին մանկան իրաւունքներէն, յետոյ կը պղծեն զանոնք...Կը խօսին ազատութենէն, կը կիրառեն ստրկութեան նոր եղանակներ...Կը խօսին խղճի ազատութենէն, կը ներմուծեն ազգաքանդ աղանդներ...Կը խօսին ժողովրդավարութենէն, միտք ու հոգի կը բռնադատեն...Սա կը կոչուի 21-րդ դարի քաղաքակրթութիւն...

.....

Յինաւուրց ժամանակներուն, մեծագոյն պատիժ կը համարուէր աքսորը հայրենիքէն...քանզի սեփական հայրենիքէն աքսորուած մարդը կը դառնայ կէս-մարդ, արմատախիլ բոյս որ տակաւ կը կորսնցնէ իր բոյրն ու թոյրը, իր ինքնութիւնը հարազատ...Ներկայ ժամանակներուն, մարդը ինքնակամ ինքզինք կ'աքսորէ սեփական հայրենիքէն՝ «ո՛ր հաց, հոն կա՛ց» տխուր մտայնութեամբ եւ կ'ինքնաքսորուի....այսինքն կը կորսնցնէ սեփական, հարազատ հոգին...

.....

Մեր անհատապաշտութիւնը գործեց եւ դեռ կը գործէ մեզի դէմ, որպէս ազգ ու հայոց երկիր...Մեզմէ ամէն մէկը կը խորհի որ ինքն է արժանաւորը, ինքն է ազգի ընտրեալը, ինքն է բանիմացը, ազգասէրը, նուիրեալը...Եւ դժուարութեամբ կրնայ ընդունիլ ուրիշը, իր ազգակիցն ու հայրենակիցը որպէս այդպիսին...: Սա մեր գլխաւորագոյն արատներէն մէկն է որ աւեր կը գործէ ազգային-հաւաքական մեր կեանքէն ներս...

.....

Վտանգաւոր է այն ընկերութիւնը, ուր չափանիշները խախտուած են..., ուր քծնանքը, շողջորթութիւնը ի պատուի են...ուր դիրքը, դրամը, շահը կը պայմանաւորեն ամէն վերաբերմունք...Նման ընկերութեան մէջ, սկզբունքային մարդը տեղ չունի եւ ասպարէզը ամբողջովին կը ձգուի պատեհապաշտ մարդկանց, որոնք կը զոհեն ամէն արժէք, բարոյական, մարդկային եւ ազգային սկզբունք յանուն սեփական շահի, շահերու ամրապնդման....Եւ կը ծափահարուին ալ բարձրադաղակ....

.....

Տգիտութենէն կը ծնի ամբարտաւանութիւնը, տգիտութենէն կը ծնի գոռոզամտութիւնը, տգիտութենէն կը ծնի մոլեռանդութիւնը, տգիտութենէն կը ծնի բացարձակատիրութիւնը, տգիտութենէն կը ծնի անհանդուրժողութիւնը եւ անկէ ածանցեալ ամէն չարիք....

.....



Վերջին հաշուով, մարդ իր խղճին է հաշուետու....իր ըրածին ու չըրածին համար....իր լաւին ու վատին համար...Խիղճը՝ եթէ առողջ մնացած է ան, կ'արժեւորէ մեր վարքն ու արարքները....անդորրաւետ ուրախութիւն պարգեւելով մեզի, եթէ բարի խօսք ու գործ ենք ըրած....եւ ահեղ դատաստանի կոչելով մեզ, եթէ չարին ենք սպասարկած....Խիղճը Աստուծոյ ձայնն է մեզմէ իւրաքանչիւրին մէջ, գոր կարելի չէ առ յաւետ լռեցնել....

.....

Ստահակին վերջին ապաւենը իր հայրենասիրութիւնն է, ըսուած է իրաւացիօրէն...., քանզի այնքան շատ են անոնք, որ երդում-պատառ կ'ըլլան իրենց հայրենասուէր գործունեութեան համար, ինքնագովութեան գազաթնակետին հասցնելով իրենց հայրենասիրական անյս կամ անյն գործի փառաբանումը....Բայց եթէ քերես գովաբանուած «հայրենասիրութեան» արտաքին կեղեւը, կը յայտնուի ամենայն յստակութեամբ տուեալ անձին կամ անձերուն եսամոլութիւնը, փառամոլութիւնը...., «Հայրենասիրութեան» պիտակին տակ՝ սեփական փառքը հիւսելու մոլեգին մարմաջը... Իրաւ հայրենասիրութիւնը լուռ եւ անաղմուկ գործ է, լուռ եւ անսակարկ նուիրում, որ կը խորշի գովեստէ, ինքնապարծանքէ, ինքնաթմբկահարումէ...

.....

Սորվելու ընթացքը դժուարին է: Ան կը պահանջէ աշակերտի բացմտութիւն, աշակերտի խոնարհութիւն, աշակերտի ընկալունակութիւն, յամառ եւ հետեւողական աշխատանք, սեփական սխալը կամ տգիտութիւնը ընդունելու համեստութիւն, սորվածը փորձարկելու եւ իւրացնելու կամք...: Յատկութիւններ՝ որոնցմէ զուրկ կը մնան շատ-շատեր, իրենց ողջ կեանքին ընթացքին...

.....

Փորձառութեանց ոսկեայ շարան՝ կեանք մը համակ, երբեմն ուրախ ու ցնծագին, յաճախ ցաւոտ եւ տրտմագին, բայց միշտ ալ թանկ, իմաստալից....տակաւ կուտակուող, մեզ լիցքաւորող, մեզ իմաստնացնող...: Բայց կա՞յ սահման իմաստնացման մեր սահմանափակ մարդկային կեանքին մէջ, ուր իւրաքանչիւր օրուան հետ՝ մեզի կը թուի թէ պիտի ապրինք առաւել իմաստնացած, հետագային նորէն ու նորէն անդրադառնալու համար որ ամէն ինչ յարաբերական է...եւ չկայ բացարձակ իմաստնացում՝ զոնէ այս կեանքի պայմաններուն ներքոյ...

.....

Այս խարխուլ նաւը կարենալ ափ հանելու համար, մեզի պետք են, պիտի ըսեր Վազգէն Շուշանեան, երիտասարդ, յանդուգն եւ առաւելագոյն հայեր....Ներկայիս եւս, որքան էական կարիքը ունինք նման հայերու, որոնք հայու ոգիով եւ հոգիով ըլլան յանդուգն եւ առաւելագոյն հայեր, ոչ՝ անպայման ֆիզիքական տարիքով երիտասարդ, բայց ներքին ուժականութեամբ....Մենք պիտի ջրդեղենք այդ ոգին, ջանձնուինք ճակատագրի չար ու նենգ խաղերուն, այլ մենք կերտենք զայն՝ մեր մաքառումով ու ոգորումով, վճռականութեամբ եւ արժանապատուութեամբ....Մեր ճակատագիրը մեզմէ է կախեալ գերագանցօրէն: Իսկ կատարուած իրողութիւնները մեղկօրէն ընդունիլը տկարութիւն է



որոշապէս: Ազգեր մեծ կ'ընծաուին այն պողպատեայ կամքով զոր ի յայտ կը բերեն անոնք ի խնդիր իրենց ազգային ետլթեան իրագործման...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրական-Մշակութային

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԱՐՕԹՔ ԱՌԱԲՕՏԵԱՆ

Տո՛ւր ինձ, ո՛վ Տէր, բերկրանքը լոյսիդ

Ծագիմ աշխարհին, մարդկանց անխտիր

Լոյսովդ արբշիռ շատնամ, տարածուի՛մ

Ինքնամատոյց բաշխուի՛մ տիեզերքին....

Տո՛ւր ինձ, ո՛վ Տէր, եռանդը լոյսիդ

Նուիրման տենդը բարի, անյոզնում

Ինքնընծայման տենչն ամենամատոյց

Լուսապարգեւ սերն իր անհատնելի...

Տո՛ւր ինձ, ո՛վ Տէր, որ լոյսիդ նման

Ինքնայրուի՛մ սիրով հրակեզ

Դառնամ անսպառ լոյս արեւավառ

Համակ աշխարհն լոյսո՛վ համբուրեմ....Ե.Գ.

.....

ՆԵՐՇՆՉԱՆՔՍ

Անհուն երկնէն, լեռնէն, ծովէն

Հով մը փչեց լուսաթրթիռ

Ներշնչանք մը երկնապարգեւ

Փայլատակեց լուսետեսիլ...

Արեւի շող մը ճաճանչեց



Սիրալոյսով մը երկնառաք

Ներշնչանքս ողողեց

Գիրեր հիւսեց սիրաճառագ...

Թելիկ-թելիկ ցօղը իջաւ

Ձերթ երկինքէն արցունք վճիտ

Յամբոյր տուաւ խոնարհ գիրիս

Մաքրափայլեց զայն լուսառատ...

Յետոյ ծիածանն երփներանգ

Շողափայլեց գիրիս վերել

Սիրտէ ի սիրտ կամար կապեց

Սիրտէ ի սիրտ համբոյր դարձաւ...Ե.Գ.

.....

ԵՍ ՓՆՏՈՒԵՑԻ

Ես փնտռեցի հոգին մարդուն

Որ անաղարտ մնացած ըլլար

Որ մաքրութեամբ մը դէռ օծուն

Նայէր մարդուն աչքով մանկան...

Ես փնտռեցի սիրտը մարդուն

Որ դէռ տրոփէր խիղճով մաքուր

Որ դէռ այրէր այլոց ցաւով

Բոցավառէր սեր-կարօտով...

Աչքս յառած լոյս տիեզերքին

Որոնեցի լոյսն հոգեկան



Լոյսը սրտի, իմացութեան

Որ կամարէր մէկս միւսին...

Սիրտով ինդուն մերթ գտայ զայն

Մերթ յուսախաբ եղայ տրտում

Բայց հոգիս խորքին մէջ լոյս

Ես գտայ մարդն աստուածարեալ...Ե.Գ.

.....

ԱՇՆԱՆԱՏՈՆ

Տերեւ-տերեւ նազելապար

Տերեւ-տերեւ հրաժեշտի բառ

Տերեւ-տերեւ լոյս շողակաթ

Տերեւ-տերեւ սիրոյ քնքշանք...

Տերեւ-տերեւ շող մը ճաճանչ

Մեղեդի մը սիրահառաչ

Շշուկ մը նուրբ ու դալկահար

Կը թրթռան հազարերանգ...

Տերեւ-տերեւ սիրտս բանամ

Կեանքի խորունկ իմաստութեան

Բնութեան հրաշք գեղեցկութեան

Ակնթարթին վսեմափայլ...

Ու թէ մեռնիլ կայ կեանքի մէջ

Պիտի մեռնիլ աշնան նման

Հուրհրատել սերեր, լոյսեր

Թէկուզ վերջին, վերջին անգամ..Ե.Գ.



.....

ԱՆՁՐԵՒԷՆ ԵՏՔ

Անձրեւէն ետք ծիածանն էր
Սփռեր ողջ հմայքն իր գունեղէն
Կարծես ուրիշ աշխարհ մըն էր
Որ կամարուէր մերինին հետ..

Յեքիաթային վառ գոյներով
Ի՞նչ անուրջներ ան կը վառէր
Մանուկ դարձած հոգիս հիացքով
Կ'ըմպէր թոյրերն իր լուսեղէն...

Երկնքին մէջ պոեմ մըն էր
Աստուածներէն յօրինուած
Երանգ-երանգ հուրհրատէր
Սէրեր, լոյսեր ծիածանագեղ...Ե.Գ.

.....

ԾԱՐԱԲՍ

Դեռ չապրուած խոր պահերու
Ծարան ունիմ ես տոչորուն
Երբ Գաղտնիքը փայլատակէ
Կայծ մը որպէս յանկարծօրէն...
Անյագ կարօտ մը կ'ապրի դեռ
Սրտիս ծալ-ծալ շերտերուն մէջ
Ակնթարթին այն լուսեղէն
Երբ Լոյս ծագի խաւարին մէջ...
Երբ հոգիս մերկ ծիածանուփ
Տիեզերական սուրբ Գոյին հետ



Սրտիս զարկը արձագանգէ
Տիեզերքի համայն տրոփին...
Երբ փոքր հիւլէս կաւը պատռէ
Իր հողէղէն, դառնայ ոգի
Ու մէկ դառնայ Ամբողջին հետ
Յրաշքով մը արարչածին...
Այդ պահերուն համար կ'ապրիմ
Պահեր սուրբ ու հոգեհմայ
Եւ կը կրեմ ամէնօրեայ
Տաղտուկն կեանքի գորշ ու նանիր...
Երազանքն են իմ երազին
Որք կը թելեն հոգւոյս վերել
Թէ երազանք ալ լոկ մնան
Անմահ հուրով կ'օծեն հոգիս..Ե.Գ.

.....

ԵՐԲ...

Երբ հոգիներն կը հեռանան
Կարծես երկինքն փուլ կու գայ
Կամ կը դառնայ անծիածան
Անհունութիւն մը անիմաստ....
Երբ հոգիներն կ'օտարանան
Անապատ մը գորշ ու դեղին
Կու գայ լեցնել ամայքը այն
Ուր սոսկ թռչուն մը գիշատիչ
Կը փորփրէ կարծես աւազն
Մագիլներովն իր կեռ, վայրի....
Խորշակահար ու տազնապած
Սիրտս յայնժամ ցաւ մը կրծէ



Յաւ մը սուր որ անանուն է
Ինձ կը թուի թէ անազն այդ
Անապատէն սրտիս խուժէ
Մրրիկ դառնայ, զայն մրրկէ...
Թէ հոգիները խորթանան
Յուշն կը դառնայ մի պաղ քամի
Որ կը թակէ դռներն սրտի
Ոռնոցով խուկ ու նողկալի...
Մի պաղ սարսուռ կը համակէ
Յոգին տխուր ու միայնակ
Մահուան նման դժխեմ, դժնէ
Մի ողջ մեռել կարծես ըլլայ...
Չէ՛, հոգիներն մեր կամարուին
Թող եօթներանգ ծիածանուին
Յեռացումը մահ է դաժան
Միաւորումը՝ սիրոյ աշխարհ
Սիրերգութիւն մը բերկրալի
Տարրերովն ողջ տիեզերքի: Ե.Գ.

.....

ԼՈՒՒԹԻՒՆ Է

Լռութիւն է անդորրաւետ
Որուն ծոցին մէջ բեղմնաւոր
Նոր խոկումներ ծնունդ կ'առնեն
Նոր աշխարհներ լուսագորով...

Աղմուկէն ետք ահագնաձայն
Խաղաղութիւն է քաղցրալուր
Յոգիէս խորունկ կը բարձրանայ



Աղօթք մը լուռ քաղցրամրմունջ....

Լոյսեր ծնին տիեզերքին մէջ
Ինչպէս աստղերն վառ երկինքին
Խորին խորհուրդ է սքանչելի
Միտք-լոյսերու աւետաբեր...

Երկինք-երկիր կը միաձուլուին
Մթուածան մէջ այս լուսածին
Եւ չես գիտեր խաւա՞ր է սա
Թե՞ լոյսերու ծննդարան...Ե.Գ.

.....

ՅՈՊԻՄ

Թող միշտ հիանա՞մ լոյսի ցոլքերով
Արեւալոյսի բիւր խաղիկներով
Գարնան ծիծաղով, աշնան գոյներով
Ձմրան խարոյկի ճարճատիւն բոցով...

Թող հոգիս գերե՛ն ծուլեններն ամպի
Որք վարդափրփուր ծփան երկնքին
Հոգիս սքանչանա՛յ անհունով երկնի
Եւ տենչա՛յ մատչիլ կապոյտին ծաւի...

Անձրեւի տեղումն մեղեդի թուի՛
Հին օրերու երգ՝ սրտիս քնարին
Շանթ ու որոտը՝ աստուածներու կանչ
Թէկուզ բարկացայտ ու ահեղասաստ..



Յոգիս մնա՛յ բիւր հմայքներով արբշիռ
Կեանքի, բնութեան ու ողջ տիեզերքի
Պեղէ յար խորհուրդն անիմանալի
Եւ չհասնի բնաւ Գոյի գաղտնիքին..

Յոգիս միշտ այսպէս թող ապրի՛ վսեմ
Յարաշարժ կեանքով ու հիացքով լուսէ
Մինչեւ որ ձուլուի համայնին անեզր
Դառնայ լոյս-հիւլէ մը անհունահեւ...Ե.Գ.

.....

ՍՊԱՍՈՒՄՍ

Տքնեցայ անդով ես գիշեր ու տիւ
Երկնեցի տողեր՝ թարգմանն իմ սրտի
Բայց արարումն երբեք չհասաւ
Նոյնիսկ դայլայլին թռչնակին խոնարհ...

Տող մը թափառէր մտքիս մէջ անվերջ
Գրիչս չհասաւ տողին սիրակէզ
Անվերջ խոյս տուաւ ու թռաւ վերեւ
Ան աստուածներուն լոկ բնակիչն էր...

Երագիս մէջ յար բառեր հիւսուեցան
Անչափ գեղեցիկ ու արեւահամ
Գրիչս չկրցաւ զանոնք վար բերել
Տողի հանդերձով զգեստաւորել...

Ես դեռ կը սպասեմ այն հրաշք պահին
Երբ ծնի տողս զարմանահրաշ



Երբ երազ ու կեանք իրար միաձուլուին

Եւ ծնի տողս վաղուց երազած...Ե.Գ.

.....

ՏՕՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Մանկական ջինջ հեքիաթներուս

Ոսկի, արծաթ բեհեզներով

Յիւսեմ պսակ մը հոգեթով

Կախեմ ես զայն ձեր դռներուն

Որպէս մաղթանք մը լուսաթով

Որ ձեր տարին ըլլայ շէնշող

Սիրալոյսով միշտ ճառագուն

Վառ հաւատքով յար առկայծուն

Բիւր յոյսերով մշտացնծուն

Ինչպէս աստղերը ցուցլուն

Բերե՛ շողքեր միշտ զուարթուն

Ձեր սիրտերուն, օճախներուն

Յայաշխարհի բիւր շէներուն...Ե.Գ.

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրական-Մշակութային

«Ձայներ Լռութեան Մէջ» Հեղինակ՝ Դոկտ. Կարայիս Տէր Եղիայեան

ՄԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ



Դոկտ. Կարայիս Տէր Եղիայեանի՝ «Voices in Silence» («Ձայներ Լռութեան Մէջ») անգլերէն հատորը կը բաղկանայ 352 էջերէ: Այդ էջերը ընթերցողին կու տան 1987էն ի վեր գրողին կողմէ կազմակերպուած ուխտագնացութիւններուն մասին տեղեկութիւններ եւ բացատրութիւններ: Իսկ հատորի 285 էջերը՝ մեծ ու փոքր, գունաւոր եւ գեղատեսիլ նկարներու համադրութիւն մը կը կազմեն:

Յարգելի դոկտորին սոյն 15րդ հատորը, ցարդ իր հրատարակած 14 երկերուն թագն ու պսակը կազմելու բոլոր արժանիքները ունի: Հատոր մը, որուն իրագործման հենքին անայլայլ կերպով զգալի է գրողին՝ հայ ժողովուրդի անժամանցելի ու արդար իրաւունքներու պաշտպանութեան նուիրուած անսասան հաւատքը, նուիրումի ու ծառայութեան անտեղիտալի ոգին: Հատոր մը, որ իր ակելի քան 800 բազմերանգ, մէկը միւսէն գեղեցիկ, ճաշակաւոր, արուեստագետ նկարիչ Մայք Յակոբեանի կրաֆիկական հոյակապ յղացքներով ձեւաւորուած նկարներով, իսկ Սարգիս Թօփալեանի «Երեւան» տպարանին մէջ տպագրուած բծախնդիր աշխատանքով՝ ամենէն խստապահանջ ճաշակն ունեցողներուն անգամ գոհացում կը պատճառէ: Իսկ 60 էջերու մէջ խտացած անգլերէն բացատրութիւնները, նկարագրութիւնները եւ պատմական տեղեկանքները յաւելեալ արժէք կ'ապահովեն հատորին:

Արդարեւ, «Voices in Silence» հատորը, իր խորքով, բովանդակութեամբ թէ ձեւով, մէկ կողմէ՝ ընթերցողին մօտ եզակիօրէն գրաւիչ այլ յուզական, գուարթ եւ խթանող տրամադրութիւններ ու ապրումներ կը ստեղծէ, իսկ միւս կողմէ՝ Սփիւռքի թէ հայրենիքի ժողովուրդին, մանաւանդ հայ նոր սերունդներուն ուղղուած կոչի մը, պայքարի մը պատգամը կը բերէ՝ մեր արդար իրաւունքներու պաշտպանութիւնը, մեր պահանջատիրական պայքարը աննահանջօրէն, անտեղիտալիօրէն շարունակելու ուղղութեամբ:

Եւ ո՛չ միայն այդ: «Voices in Silence» հատորը, աչք եւ սիրտ գրաւող իր պատկերազարդ էջերէն եկող պերճախօս, բազմանշանակ լռութեամբ, աշխարհի ճակատագիրը վարելու յաւակնութիւնը սնուցանող մեծ ու պզտիկ երկիրներու մեծ ու պզտիկ ղեկավարներուն կը յիշեցնէ՝ բառերով չխաղալու, սեւին սեւ ըսելու պարկեշտութիւնն ու քաջութիւնը: Ճշմարիտը, իրաւը, արդարը պաշտպանելու հրամայականը: Ուրացողներուն, զաւթումը, յափշտակումը, ոճիրը իրենց շրջուած ուղեղով արդարացնողներուն դիմակները վար առնելով՝ զանոնք անարգանքի սիւնին գամելը: Մեր ժամանակներու համաշխարհային թոհուբոհին մէջ, թափանցիկ ճարպիկութեամբ, սիւնիքօրէն ճշմարտութեան հետ ճիրիտ



խաղացող, օսմանեան իրենց օրը ապրած ցեղասպան սուլթաններու, Թալէաթներու ցեղասպանական արարքները արդարացնել ջանացող Էրտողաններու եւ Չաուուշօղլուներու սին յաւակնութիւններուն դէմ բռնուցք դառնալու հրամայականը:

Այո՛, յարգելի ընթերցող, «Voices in Silence»ը, իմ կարծիքով, մեր պատմական հայրենիքի աշխարհիկ թէ հոգեւոր կառոյցները՝ ամրոցները, տաճարները, եկեղեցիները, կոթողներն ու խաչքարերը, մեր հայրենի դրախտանման բնութեան սեզ, ձիւնապատ լեռները, լայնահաստ կանաչ անտառները, դաշտերը, լիճերը, գետերը, իրենց հարազատ զաւակներէն պարպուած քաղաքներն ու գիւղերը ներկայացնելու, մեր անչափելի կորուստին ահաւորութիւնը ավիտասալու եւ սգալու միտող հատոր մը չէ՛ լոկ: «Ձայներ Լռութեան Մէջ» հատորը նաեւ մեզ միասնականութեան հրաւիրող կոչ մըն է, հաւատք, յոյս ու կամք շեփորող պատգամ է: Խորախորհուրդ, բազմիմաստ ու բազմաբովանդակ պատկերազարդ պատգամ մը, Պարոյր Սեւակի «Անլռելի Չանգակատուն»ին պէս յաւերժախօս պատգամ մը:

Քանի մը խօսք՝ «Voices in Silence»ի հիմնական նիւթերուն մասին:

Առաջին մասը կը բացուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ի անգլերէն գրուած Օրինութեան նամակով, որուն մէջ վեհափառ հայրապետը իր ուրախութիւնն ու շնորհաւորութիւնները կը յայտնէ «Մաշտոց» քոլեճի 25ամեակին եւ դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի՝ Միացեալ Նահանգներու մէջ ծառայութեանց 40ամեակին առիթներով, բարձրօրէն գնահատելով երկուքին առաքելութիւնը՝ կրթութեան, հայկական ժառանգութեանց եւ ինքնութեան պահպանման ոլորտ-ներուն մէջ: Վեհափառը նաեւ առանձնապէս կը գնահատէ Արեւմտեան Հայաստան ու Կիլիկիա կատարուած ուխտագնացութիւններով դոկտ. Տէր Եղիայեանի սատարումը Հայ Դատին:

Վեհափառի գնահատականին կը յաջորդէ հեղինակին հետեւեալ սրտաբուխ Ձօնը.

«Այս հրատարակութիւնը նուիրուած է մեր թանկագին զաւակներուն եւ սիրասուն թռնիկներուն՝ հպարտ եւ երախտագետ ջահակիրները մեր թանկարժէք աւանդութեանց եւ սրբազան արժէքներուն, եւ ի յիշատակ մեր անսման ծնողներուն, մեծ հայրերուն ու մեծ-մեծ հայրերուն»:

Ապա կու գան երկու նախաբաններ. մէկը՝ Պէյրութի Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փօլ Հայտոսթեանի, իսկ միւսը՝ հեղինակին՝ դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի կողմէ գրուած: Կը մէջբերեմ ընտիր անգլերէնով ու միտքերով եւ այլաբանական ոճով գրուած քանի մը նախադասութիւններ՝ վեր. Հայտոսթեանի նախաբանէն.

«Այն բոլոր զրոյցներէն, որոնք կ'ըլլան մեր երկուքին միջեւ, լռութեան մէջ տեղի ունեցողները կը պատկանին խորութեանը սրտին:

Այն բոլոր իմաստներէն, զորս մէկը կրնայ ընել կեանքի մէջ, անոնք, որոնք կրնան անդրանցնիլ ժամանակն ու միջոցը, անոնք, որոնք կ'օգնեն մեզի ըմբռնելու Աստուծոյ Նուէրը՝ անսահման վաղուան մը համար, ասո՛նք են որ կը գոհացնեն հոգին:

Այն բոլոր հեղինակներէն անո՛նք, որոնք կը թողուն մնայուն տպաւորութիւն, անո՛նք, որոնք կը կորսնցնեն իրենք զիրենք պատմութեան միացման ճգնաժամային պահուն եւ



միաժամանակ իրենք զիրենք կը գտնեն հաւաքական լայն ինքնագիտակցութեան մէջ, անոնք են ամենէն պերճախօսները:

Այսպիսին է եղած կեանքի ճանապարհորդութիւնը դոկտ. Կարպիս Տեր Եղիայեանի: Արդ, այս նախաբանը նուիրուած է զգայուն հոգիով, մանկական սրտով, բանիմաց մտքով կենսաթրթոռ դաստիարակի մը, Բարի Լուրի առաքեալի մը եւ առաջնորդող հաղորդակցողի մը: Սոյն հատորին մէջ ան նաեւ արթիսթ մըն է հայկական յիշողութեան»:

Վեր. Յայտոսթեանի նախաբանին կը հետեւի դոկտ. Կարպիս Տեր Եղիայեանի անգլերէն նախաբանն ու երախտագիտական խօսքը: Իմաստալից միտքերով, յիշողութիւններով ու ապրումներով գրուած իր նախաբանին մէջ, ան, ի միջի այլոց, կը խօսի իր մեծ հօր՝ Ստեփանի մասին, որ յարատեւ, անմոռանալի ազդեցութիւն ունեցած է իր կեանքին վրայ: Փափաքողները կրնան մնացեալը կարդալ՝ դիմելով կամ հեռաձայնելով «Երեւան» տպարան՝ (818) 246-2070, եւ հատորէն օրինակ մը (կամ օրինակներ) ապահովելով: Իսկ երախտագիտական բաժինին մէջ, հեղինակը իր երախտագիտութիւնը կը յայտնէ Արամ Ա. վեհափառին, վեր. Փօլ Յայտոսթեանին, բոլոր հովանաւորներուն, յատկապէս «Երեւան» տպարանի սեփականատեր Սարգիս Թօփալեանին ու հատորի կրաֆիքական ձեւաւորումը իրագործած արուեստագէտ Մայք Յակոբեանին:

Կը յաջորդեն այցելուած 81 քաղաքներու անուններու ցանկն ու քարտեւը:

Իսկ «GOING HOME-ԴԵՊԻ ՏՈՒՆ» գրութեամբ, կը սկսի ուխտագնացութիւնը դէպի Կիլիկիա, Կապադովկիա եւ Արեւմտեան Յայաստան: Մեկնարկը կը սկսի Պոլիսէն դէպի Ատանա՝ օդային թռիչքով, ապա կը շարունակուի ցամաքային ճամբով: Կ'այցելեն՝ ոչ անպայման իմ թուած անուններու կարգով՝ Իսկէստերուն, Թարսուս, Մերսին, Կորիկոս, Պելլան, Մուսա Լեռ, Անտիոք, Գըրըք-Խան, Չորք-Մարգպան (Տեօթ Եոյ), Հասանալէյի, Պերեճիք, Քիլիս, Այնթապ, Մարաշ, Չէյթուն, Հաճըն, Էվերէկ, Սիս, Թոմարգա, Ճուճուն, Կեսարիա, Աքսարայ, Պողազլեան, Ատիեաման, Սեվերէկ, Մարտին, Տիգրանակերտ, Էրճանի, Բալու, Խարբերդ, Մալաթիա, Կիւրին, Սեբաստիա, Չառա, Չըմըշկաձագ, Արաբկիր, Ակն, Շապին Գարահիսար, Թամզարա, Երզնկա, Թերճան, Էրզրում, Ադրի, Թիւնճելի, Մալազլերտ, Մուշ, Սասուն, Պիթիս, Աղթամար, Վան, Իգտիր, Տողուպայագիտ, Արարատ լեռ, Անի, Կարս, Արտահան, Արդուին, Հօբա, Ռիզէ, Տրապիզոն, Կիրասոն եւ Օրտու:

Այցելուած իւրաքանչիւր վայրէն վերցուած են խմբական թէ անհատական մեծ ու պզտիկ նկարներ: Առաւել՝ կանգուն մնացած թէ մեծ մասամբ աւերակի, զոմի, պահեստանոցի կամ որեւէ այլ բանի վերածուած հայկական բնակարաններու, եկեղեցիներու, վանքերու, ամրոցներու, ճարտարապետական կոթողներու, կամուրջներու, շուկաներու, քանդակներու պատկերներ. մանաւանդ՝ լեռնային, դաշտային, ջրային բնական տեսարաններ: Դիտելով այդ խօսուն, վաւերական, պիպլիական խորհրդաւորութիւն ու գրաւչութիւն ունեցող տարածքները ներկայացնող նկարները՝ հոգիիդ, ներաշխարհիդ խորերէն կարծես կը լսես հողին կանչը, կը զգաս հազարամեակներէ եկող նախնիներուդ շունչն ու ոգին ու չես կրնար չհիշել Սարմէի զայրացկոտ հարցումը՝ «Ո՞վ է ապրում այնտեղ հիմա. իրեն յաւետ տէ՞ր է կարծում...», կամ չձայնակցիլ Անդրանիկ Ծառուկեանին՝ «Պիտի հասնինք, սրբազան լեռ, կատարիդ»:

Արդ, «Ձայներ Լռութեան Մէջ» հատորը, որմէ օրինակ մը ամէն հայ ընտանիք պարտի ունենալ, ես կը համարեմ մայուն յուշարար մը՝ հայ ժողովուրդէն Ցեղասպանութեամբ



Իլլուած հազարամեակներու իր հայրենիք՝ Պատմական Հայաստանի եւ Կիլիկիոյ մասին: Մեր դէմ կատարուած այս ահաւոր անարդարութիւնը անգամ մը եւս կը յուշէ մեզ Չարենցեան հզօր պատգամը. «Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

Սիրելի՛ Կարպիս, վստահ եմ, որ աստուածատուր շնորհներովդ պիտի շարունակես Նուիրումդ ու ծառայութիւնդ Աստուծոյ փառքին, վասն մեր նահատակներու սուրբ կտակին եւ վասն հայ ժողովուրդի արդար պահանջատիրական յաղթանակին:

Խոշոր շնորհակալութիւն քեզի: Զաջառոջ, երկար կեանքի եւ նորանոր յաջողութիւններու մաղթանքով՝ վարձքդ կատար:



ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Փստոռեցի լոյսն իմաստութեան

Գեղեցկութեան, ազնւութեան

Լոյսն անոնց միշտ անսպառ

Ինձ ճախրանքի թելեր տուաւ...

.....

Շքեղափայլ պալատներուն

Սառնութիւնը ես զգացի

Մեր հինաւորոց, հնամեայ վանքին

Սրբատաշ քարն զիս ջերմացուց...

.....

Մտքի, սրտի յոյզն ու խռովքն է

Որ ափէ ափ հոգիդ լեցնէ

Ալեկոծէ քեզ փրփրադէզ

Որ մարգրիտներ ափին նետէ...

.....

Խառնաշփոթ է լրատուական

Որ մոլորիս, չհասկնաս

Ճիշդն ու սխալը իրար խառնես

Ո՞վ է, ի՞նչ է, դուն չըմբռնես...

.....

Ինչպէ՞ս կ'ապրիս դղեակիդ մէջ

Որկորովդ գերյագեցած

Երբ քիչ անդին փողոցին մէջ



Սովալլուկ փոքրիկներ կան...Ե.Գ

.....

Ճշմարիտը այն հունտն է

Որ թաքնուած է հողին մէջ

Խոփոյ պիտի խրես խորունկ

Որ կարենաս զայն բերել դուրս..

.....

Տառապանքով միայն կրնաս

Իջնել հոգւոյն խորխորատներ

Անոր անհունը խորզգալ

Խորունկ սրտով մը կարեպէր...

.....

Ժամանակը մեծ դպրոց է

Ան կը կրթէ, կ'ուսուցանէ

Յարդը ցորենէն կը զատէ

Բայց ան մեծ գին կը պահանջէ...

.....

Գովեստն անկեղծ թելեր կու տայ

Կը խրախուսէ, նոր լիցք կու տայ

Քննադատող խօսքը սակայն

Թէ անկեղծ է՝ նոր դաս կու տայ...

.....

Շքեղ պերճանքն ողջ աշխարհի

Ազահներուն դառնայ բաժին

Գողտրիկ անկիւն մը բնութեան

Թող զիս լիացնէ երջանկութեամբ...

.....

Կեանք մը համակ քեզ կ'ընծայես



Խոհ-ապրումներ, միտքեր անանց

Կը նախընտրեն ուտել-խմել

Քան խրախճանքը հոգիին գանձ...

.....

Ներկայ պահը ներկան չէ միայն

Ան անցեալին Է պարտական

Ապագային Է ուղղորդուած

Խտացած պահ յաւերժական...

.....

Կեանքը մաղ Է, կը մաղէ յար

Ընկեր, ծանօթ ու բարեկամ

Պահեր ապրուած ու չապրուած

Կը մնայ լոկ Էականն..

.....

Թող կեանքն ըլլար մի գառիվեր

Բարձրանայիր դուն անվերջ

Չառիթափը չըլլար երբեք

Կանգառն ըլլար կեանքի վերջ...

.....

Ի՞նչ ալ պատահի կամ չպատահի

Յուսայքուելու իրաւունք չունիս

Կեանքը պայքար Է, դադար մը չունի

Մի յանձնուիր կոյր ճակատագիրին...

.....

Երկար ապրիլն իր գինն ունի

Մէկը կ'երթայ իր հմայքով վէս

Միւսը տակաւ կը թառամի

Գունաթափի իր ողջ հմայքէն...



.....

Խոհը խորունկ քմահաճ է

Ուզած պահին ան կ'այցելէ

Անպատեհ ժամն ան նախընտրէ

Որ զայն փախցնես, յետոյ փնտռես...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ